



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4317

Ամրապնութեաբուժական գիտութեան

Պաշտոն վարդապետի պայման

281.64.  
4-SI

Թալիս

1874

2010

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՆԱՅ

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Վ. Ր. Ա. Յ



Կ. ՊՈՂԻՆ

Տպագրութեան Ամստել Գ. Պարտիական Ահ. Հան.

1874

281.69.  
4.51

281.64

Ա-51

Կ

# ԱՄԲՈՅՏՆԱԽԹԻՒՆ

ՎԱՆԱՅ

ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎՐԱՅ

33164

# ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Պ Ա Ն Ա Յ

ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎՐԱՅ



« Բարսոք է Աղ . ապա կրէ  
« Աղն անհամեսցի . ին . համեմես-  
« ցի . ոչ յերկիր եւ . ոչ յադր է պի-  
« տանացու , այլ ընկենուլ զնա  
« արտաքս » :

Ա.

Մենք միտք չունեինք այսօր նկարագիր մը  
տալ այն անցեալին , որ բարոյապէս և նիւթա-  
պէս մահառիթ եղած է վանայ հասարակութեան ,  
Պօղոս վարդապետին վարդապետութեան կոչուած-  
օրէն սկսեալ , քանզի դա վարդապետ ձեռնա-  
դրուելուն հետ սկսած է վանայ ազդային բարձր  
պաշտօնավարութիւնները վարել մինչեւ հերու , և  
եթէ հաշիւ բռնուէր՝ կը տեռնուէր որ , առանց  
ընաւ չափազանցութեան , ամէն մէկ օր՝ մէկ ո-  
ճիր , մէկ գայթակղութիւն ըրած եղեր է դա :  
Մենք միտք չունեինք ասոնց վրայ նորէն խօսե-  
լու , կըսենք , քանզի այնքան յաճախակի դրուած



1871  
39

տուին մեր բողոքողներս անդամ զղուած ենք, ո՞ւր կը մնայ հապա լսողները։ Բայց ո՞վ է որ նորէն կ'ստիպէ զմեղ կրկնել այս ամէնք, որ նոյն իսկ վարչութիւններն անդամ տաղտկացած են լսելով և վաստակելով։ — Խնդիրն ինքնին կուգայ կը դտնէ զմեղ։ Կստիպէ զմեղ։ կը համոզէ զմեղ, թէ՝ այս անդամ ալ կեդր։ Վարչութիւնը առանց նկատողութեան առնելու խնդրոյն պարագաները, և իրեն ըրած որոշումէն յառաջ դալիք ծանր ծանր հետեւանքները, ներելի լինի մեզ այսպէս ըսելու . սխալած են իրենց որոշման մէջ, այն է «Թագավոր գրել և տալ ի Բ. Դուռը, որ Պօղոս վարդապետ կարինէն ի վան դառնայ»։ Փուժանք ըսելու նաև թէ՝ «Վանայ Անապատին վանքը երթայ առանց Ազգ։ դործոց միջամտելու»։ Եթէ քաղաքականութիւն մը կայ Խառն ժողովը այս անդամ որոշածին մէջ, այն ալ վերցորեալ խօսքին վերջին մասն է . այսինքն «Անապատն երթայ, և Ազգ։ դործոց չմիջամտէ»։

Մենք ըստ կարդին պիտի ցոյց տանք թէ՝ ի՞նչպէս անկարելի է Պօղոս վ. Վանայ Անապատը կամ վանայ վանքերէն մէկը երթայ ու Ազգ. դործոց չմիջամտէ։

Խառն ժողովը այս որոշումն ըրած էր արդէն, և լրագիրները հրատարակած՝ երբ խմացանք, և 1873, դեկտ. 28 ուրբաթ օրը խնդրագրով մը ներկայացանք, ի Ղալաթիա, ժողովոյն. և բողոքեցինք այդ որոշման դէմ։ Նոյն պահուն բաղաքական ժողովը Ա. Բ. Վանմ Ատենապետները ժողովէն մեկնեցան դուրս, մնացեալներն ալ հազիւ կարեւորութիւն

Արդէն այս դրութիւն էր պատճառ, որ դա շարունակ և աճեցուն դործեց չարութիւն, և շարունակ վարեց պաշտօնը, մինչև օր մը՝ հաղիւ Մարդ մը, որ թէ՝ մաքով ու աչքով կը տեսնար ու կը ճանաչէր զանի, որ խղճով և սիրով կուզէր վերջ տալ այն չարեաց՝ որ այս վարդապետի ձեռքէն և երեսէն կը կրէր վանք, և թէ ո՞ւր կերթար այդ բաղմահայ երկրի վիճակը, եթէ տակաւին այս հայութեան դահիճը Պօղոս վարդապետ առաջնորդէր անոր։

— Ա. Խրիմեան հայրեկն էր մեր ըսած այն հայրենասէր Մարդը՝ որ արդար և արծուատես աշօք կը նկատէր գաւառացւոյն և Տաճկաստանի ամէն Հայուն ընթացքը, փորձով գիտէր, զդալով կը դիտէր, և անձնուէր արիութեամբ ուղի կը հորդէր Հայոց Հայոց յառաջադիմութեան, գլորելով խոչնդուն պատճառող քարերը արահետ ճա-

նապարհէն, որոց կարդէն էր և մեր Պօղոս վարդապետ: Քա՞ր որձաքար, որուն ձեռք տալու կը վախնային նախորդ Պատրիարքները և վարչութիւնը, կասկածելով թէ դիրքը փոխելով այդ անձին, դա իր կրօնքը կը փոխէ, և Յայտնութեան մէջ երեւցած Վիշապին նմանցնելով՝ անոր տուտն ալ աստեղաց երրորդ մասը իրեն հետ պիտի քաշէր, այսինքն վանեցիներէն շատերը Պօղոս վարդապետին հետեւելով կրօնափոխ պիտի ըլլային:

Այս փոքրողի անձանց յատուկ եղած երկիւզը սխալ երեւցաւ ոչ միայն վանայ Պօղոս վարդապետին վրայ, այլ և Սոոյ Նիկողոսին, և այլոց վրայ, որոնք առ հասարակ իրենց գայթակղութեամբ հանդեճ՝ երկիւղ սփոելով կը տիրապետէին մէկ մէկ երկիրները, իբր թէ այն տեղերու կուտերն ըլլային ատոնք:

Ցաւալի է այս առթիւ այս յիշատակութիւն ընելուս հետ յիշել նաև թէ, եղան ոմանք, որ Խրիմեանի այս արիութիւն և ճշմարիտ պաշտօնավարութիւնը՝ իրենց դաւաճանութեանց մէկ մէկ առիթ համարեցին, և փոխանակ ուղերձներ ընելու Ս. Հայրիկին. ամբաստանեցին, թշնամանեցին, մինչեւ զզուեցնելով կամ վշտացնելով Պատրիարքական պաշտօնավարութենէն ալ հրաժարեցուցին, և ցայսօր կը դատափետեն զնորին Սըրբազնութիւնը՝ ժողովրդեան բարիք խորհելու և գործելու համար:

Այդ ի՞նչ ըսելէ: Մենք այսպէս կը հասկնանք, — ով որ վատ է, բռնաւոր է, կը չարչարէ, կը

հարստահարէ, կ'անօրինէ, կը գայթակղեցնէ, նա է այս ժամանակին արժանաւոր մարդ, նա առաջնորդ, նա՛ ժողովական, նա՛ ազդային ամէն բան: Եւ, ով որ ընդհակառակն՝ հակառակ:

Լրագիրներէն և ընթերցողներէն որի՞ն ծանօթ չէ Պօղոս վարդապետ իր գործածներով: Կրօնական և Քաղաքական ժողովոյ պաշտօն վարողներէն որի՞ն ծանօթ չէր նա: Եւ այդպիսի մէկը, եթէ Խրիմեան թողուցած ըլլար պաշտօնի մէջ, պէտք էր զիրիմեան պատրիարքութենէ ձգել տալու չափյանցանք համարել. այն ինչ հակառակն պատահեցաւ: Ալ պէտք չունինք զարմանալու թէ՝ ինչո՞ւ համար դաւառները առանց արաջնորդի մնացած են, եղածներնէն ալ շատեր ուր Պօղոս վարդապետի նմանն են, վասն զի կ. Պօղոս Աղդ. կեդրոն այսօր այդպիսիները կուղէ, կը պաշտպանէ:

Ի՞նչ ընթացք, և ի՞նչ կերպ կառավարութիւն է այս, Տէ՛ր Աստուած:

Երդնկայու Առաջնորդ Արժ. Գրիգորիս Վ, Ալէթճեանց, իր վիճակէն կը հանեն, Պօղոս կը բերեն. վճիռ կուտան որ երեք տարի բնաւ պաշտօն չվարէ, մինչև եկեղեցական պաշտօն վարելէ ալ դադրեցունել կուղէ զանի կրօնական ժողովը: Պատճաճուք. վասն զի Շահ Հիւսէյինի համար նամակ մը գրած ու հրատարակած է: Եթէ այս լիներ պատճառ, պէտք էր մեր Պօղոս Վ. հազար անգամ պատապարտուէր, վասն զի Վանայ վիճակը որքան քիւրդ, գող, անառակ, աւաղակ, հարըստահարիչք կան, բոլորին պաշտպան է, բարե-

կամէ , ազատարար է , հետեւաբար և անոնց պէս  
մէկն է նա ալ : Այս կէտը ընդարձակ պիտի գրենք  
իր կարգին :

Պօղոս վարդապետի պաշտպանողներուն մենք  
կ'առաջարկենք որ Պօղոս բերել տալով նշանաւոր  
պաշտօն մը տրուի անոր , վասն զի այդպիսեաց ար-  
ժանավայելչութիւնք Պօղոս մէջ աւելի լաւ կը  
ճանչցուին : Ափսոս չէ՞ նա իվան դառնայ : Զըր-  
կանք մ'է այդ՝ անոր արժանապատուութեան ,  
երբ իրմէն պակաս եղողները հոս բարձր պաշտօն-  
ներու վրայ կը գտնուին . նա հոն շարունակ կ'ամ-  
բաստանուի : Այդպիսի մէկը ինչպէս զինքը պաշտ-  
պանողներն կուզեն ըլլայ , պիտանի է ուրիշ տե-  
ղերու մէջ ալ պաշտօնք վարել . իր խնամք տարա-  
ծանել , ինքինքը ճանչցնել : Մ'եծապէս կը զար-  
մանանք , երբ կը տեսնանք նաև Մաքսուտեան  
Վսեմ : Սիմոն պէյի և և Ցատեան Վսեմ : Առաքել  
պէյին , և միանդամայն իրենց հետ նատող Ժողո-  
վական տեարց՝ այս խնդրոյն մէջ բռնած ընթաց-  
քը , որոնք այնպիսի ժամանակի մը մէջ պաշտօնի  
կոչուեցան , որ պէտք էր իրենց իմաստութեան  
վայելած որոշումներ ընէին կուսակցական խնդրոց  
մէջ , « որպէս զի իրենց յայտարարած « խաղաղա-  
սիրական » պաշտօնը կատարած ըլլային : Խաղաղա-  
սիրութիւնը , որոյ բուն հիմն է արդարասիրու-  
թիւն : Արդ՝ ժողովականք ամէնքն ալ քաջ գի-  
տեն , որ գրեթէ քսան տարիէ հետէ վանը կուսակ-  
ցութիւն և խոռվութիւն կայ , և այս շարունա-  
կութեան մէջ խոռվութեան առիթն ու առարկան  
կուսակցութեան գիւցաղն՝ Պօղոս վարդապետն է

Միմիայն ՆԱ : Նա՝ որ իր կոնակը տուած է կարդ  
մը անձանց , և թիկունք առած երկրին մէջ գըտ-  
նուած շահասէրներ և փառասէրները . կարդ մը  
ալ անխիղճ և անառակ անձինքները : — Այս ,  
այսպիսիքն են նորին արժանապատութեան սե-  
ղանակից , խորհրդակից , գործակից , և կենցա-  
զակից մարդիկ — : Ասոնցմով ազդեցութիւն կը  
գործածէ նա գիւղերու մէջ , լեռներու վրայ ,  
կառավարութեան ատենի մէջ , բանտերու մէջ ,  
Ազգային հրապարակական և առտնին խնդրոց ,  
յարաբերութեանց և առնչութեանց մէջ . և շա-  
րունակ վնասել , ընդոտնել , չարչարել , խոռվել  
և սարսափեցնել կուտայ համեստները , ուղղու-  
թեան և յառաջադիմութեան սիրողները :

Այս ա՞ղ է եկեղեցւոյ : Սա հովի՞ւ է ժողովուր-  
դին : Սա առաջնո՞րդ է երկրի մը :

Բ.

Ներկայ վարչութիւնը , կըսենք , արդարասիրու-  
թեամբ պէտք է խաղաղասիրութիւն ընէ , խաղա-  
ղութեան հակառակորդը , խոռվութեան առիթը  
վերցնել պէտք է , որ խոռվութիւնն ալ վերնայ ,  
ու խաղաղութիւնը հաստատուի : Բայց մեզի կըսէ  
վարչութիւնը , մեր երկրորդ ներկայացման օրը .  
1874 , յունվար 4 , մեզի կըսէ որ , « ի՞նչ բողոք  
կամ ամբաստանութիւն ունիք Պօղոս վարդապե-  
տին վրայ , գրի առէք բերէք , մտիկ կընենք .  
եթէ կրցաք հաստատել մենք զանի նորէն ետ կը

դարձնեմք : Բայց ասոր համար ալ պէտք է ստուրագրէք նախ երկու պայմանը » : — Ի՞նչ են : «Ա. Եթէ չ'կրցանք հտառատել ձեր յառաջ բերած տմբաստանութիւնը . պէտք է դուք պատիժ կրէք , և անոր վնասները հատուցանէք » : «Բ. Զեր ամբառատանութիւնները պէտք է ըլլան նոր դործած յանցանքներ , վասն զի հին դործածներու համար ինչ որ քաշեց բաւական է » :

Վերոյգրեալ պայմաններուն պատասխաննիս՝ թէ ժողովյն մէջ , և թէ հրապարակաւ՝ այս է . — Տեարք , եթէ չ'կրնանք ամբաստանութեամբ հաստատել , արդէն ըստ ամենայն օրինաց մեք զրպարտող եղած կըլլանք , և հետեւաբար պատիժ մեք կը կրեմք : Արդ՝ առաջարկել մեղ այդ պայմանը , և ստորագրութիւնը ուղել , կը նշանակէ օրէնք չունենալ , և եթէ օրէնք ալ չ'կայ Աղդային վարչութեան , արդարութիւնը կայ և միշտ կայ , ըստ այնմ կամ Պօղոս վարդապետ կամ մենք կը դատուինք :

Հիմայ , եթէ ներելի լինի , մենք պէտք է առաջարկենք վարչութեան , թէ — հաճեցէք ստորագրել , որ տրդարութեամք ուշադրութեան առնուք այս խնդիրը , և վճռէք : — Ստորագրել , որ եթէ Պօղոս վարդապետ ամբաստանութամբ դատապարտուի , բողոքողացս և վանայ համօրէն հասարակութեան և անհատներու վնասներ և կորուստները որ մինչեւ ցայսօր Պօղոս վարդապետի ձեռքալ կամ անոր առիթով հասած են , հատուցուի վարչութեանդ ձեռքով , և Պօղոս վարդապետըն ալ անշուշտ պատժուի իրեն դործակիցներով :

Գալով երկրորդ պայմանին , այսինքն՝ Նոր յանցանքներով ամբաստանելուն , կը տատասխաննենք խոնարհաբար : Այդ մարդը՝ մինչև 1872 օդոսոսին՝ որ տակաւին վանն էր , ինչ որ ըրածունի , կրնանք մէջ բերել : Իսկ , եթէ ըսէք մեղի , ինչպէս որ ըսիք , թէ « Անոնց փոխարէն ահա տարիէ մը աւելի բացակայ ապրելով վանէն՝ բաւական պատիժ պէտք է համարել իրեն » : Թէեւ արդարութեան համաձայն չէր ըլլար այդ , բայց գոնէ մենք ալ բողոք չէինք ըներ նորէն , եթէ այդպէս ըսելով հանդերձ՝ չ'վճռէր վարչութիւնը որ՝ Նա նորէն վերադառնայ վան : Արդ՝ « անապատ երթայ , բայց Աղդ . գործոց չ'միջամտէ » ըսել , և « Հին յանցանաց համար այսքան ամնոյ բացակայութիւնը հերիք համարելու է » ըսել , կը հաստատեն թէ , վարչութիւնն ալ համոզուած է որ Պօղոս վարդապետ Աղդային դործոց միջամբտերով վսասակար եղած է , և է : Եւ թէ՝ Պօղոս վարդապետ յանցանքներ ըրած է . ու աքսորելու ալ արժանի մէկը եղած է , և ահա իր աքսորն ալ քաշած է :

Այս պայմէս ընդունելով , կը հետեւցնենք հարցնելով , թէ — կուզէ՞ ուրեմն վարչութիւնը՝ որ Պօղոս վարդապետ վան երթայ , նորէն յանցանք գործէ , և նոր ամբաստանութիւն յարւցանենք վրան : Բայց անոր յանցանքները , մէկ մէկ սոսկալի աւարներ կը տանին վանայ Աղդային կեանքէն : Զե՞ն մեղքնար անոնց : Ինչո՞ւ համար չը բարեհածիր կարճն , ուղիղն , և օդակարն ի գործ դնել : Միթէ վարդապետը

քաղաքացի՝ մ'է , վաճառակա՞ն մ'է , երկրագո՞րծ  
մ'է , ընտանի՞ք ունի , որ երբ թողու այն երկիրը  
և երթայ ուրիշ մը , այնքան մնաս պատճառի կամ  
ընտանիքը չարչարուին : Սա՝ եթէ եկեղեցական է,  
ուր որ լինի՝ եկեղեցին պակաս չէ իրեն . եթէ  
վարդապետ է , շատ տեղ ուսուցի և քարոզի կա-  
րօս են . եթէ քաջ առաջնորդ է , ահա ամէն կող-  
մէն առաջնորդ կուղեն . եթէ կրօնաւոր է , չորս  
կողմը լեցուն վանքեր են . եթէ աղ է՝ կը աեմք ,  
թող քիչ մ'ալ ուրիշներ ճաշակեն ասոր համը :  
Այդ աղը այնքան տարի է մեր թանը չանուշեց ,  
այլ միշտ դառնացոյց : Այդ աղը վանայ համար  
« Աղ անհամ և անպիտան է » այսքան երկար տա-  
րիներու փորձով , « ոչ յերկիր և ոչ յաղբ է պիտա-  
նացու , այլ ընկենութ զնա արտաքս » ըստ անսուտ  
բանի Ս. Աւետարանին : Դա՝ դույն է կատարեալ ,  
ասոր համը վանայ կրօնաւորք , աչխարհականք ,  
կանայք , մանկափիք , այլազգիներէն անդամ ճաշա-  
կած և մահացած են : Մահացած , կը սեմք , բարո-  
յապէս և մարմնաւորապէս , ինչպէս պիտի տես-  
նուի մեր յառաջ բերած ամրաստանութեանց հա-  
մառօտ ցանկին մէջ : Ստիպեալ ենք այդ ցան-  
կը հրատարակել իրեւ հարուտահարեալ դա-  
տախազք , դատաստան խնդրելով ներկայիս մէջ  
ներկայ վարչութենէն և հրապարակական ընթեր-  
ցողներէն . Դատաստանի յանձնելով և ապադային  
մէջ դալիք սերունդէն և պատմութենէն : Դա-  
տաստանի հաւատալով նաև Աստուծմէն , թէւ  
ՆԱ դիտէ զամենայն , բայց յիշեցնելու համար թէ՝  
Աստուծ ալ զմարդիկ կը դատէ արդարութեամբ

ի միւսանդամ գալստեան՝ մարդոց առաջուց գոր-  
ծած յանցանաց համար , և ոչ թէ ներկայ վար-  
չութեան պահանջածին համաձայն՝ մեռնելէն և  
գերեզման աքսոր դնալէն զինի՝ կը ներէ , ու յա-  
րութիւն առնելէն զինի գործելիք նոր յանցանք  
կը փնտուէ որ դատէ :

Վարչութիւնը մեզ կը պատասխանէ թէ՝ « ՄԵՆՔ  
մեր որոշումն ետ չենք առնուր , դուք ինչ կու-  
գէք ըսէք » :

Այս ի՞նչ գրութիւն է : Տեարք , Դուք երկու  
կուսակցութենէն մարդ կանչեցի՞ք , երկու կողմի  
գրուածները ուշադրութեան առի՞ք , և ի՞նչ  
շուտ : Դուք այս խնդրոցն սկիզբը , մէջը և վախ-  
ճանը քննեցի՞ք : — Ոչ :

— Այլ կըսէք թէ՝ « Խրիմեան Սրբազնի որո-  
շումն է կը գործադրենք , անոր սկսածի շարու-  
նակութիւնն է , անոր գրած նադիքն է , որոյ ըս-  
տորագրութիւնը միայն փոխելով Ս. Տեղապահին  
ստորագրել տալով Բ. Դուռը զրկուած է :

Որքան շատ բան ունենանք բնելիք հսս , զանց  
կընենք : Միայն սա պարագայն կուղենք ծանուցա-  
նել որ , մենք նոյն խակ Խրիմեան Սրբազնին ալ  
բողոքեցինք . բարեբազդաբար ետ դարձած էր  
նադիքը . բայց երբ հարցուցինք նորին Սրբազնու-  
թեան թէ՝ ի՞նչ բանի վրայ հիմնած էր այդ թագ-  
րիրը . դիւանատունէն դրեր բերել տուաւ և  
ցցուց մեզ , որ գրուած էր կարնոյ Ազգ . Քաղա-  
քական ժողովէն և զեր . Յարութիւն սրբազնէն ,  
որոնք կը խնդրէին Պողոս վարդապետի Խթանք հա-  
նել և զրկել վանայ վանքերէն մէկը՝ ըստ որում

Պօղոս վարդապետ ինդիր տուած էր յիշեալներուն իրեն անձնական հիւանդութիւնը պատճառ գնելով և վտանգաւոր յուսահատութիւնը . . . եթէ վարչութիւնն ալ այս հիման վրայ կազմած է իր որոշումն , ինչպէս Խրիմեան Սրբազնն , նոյնպէս և վարչութիւնն՝ այս մասին մէջ խարուած է մեծապէս :

Պօղոս վարդապետ եթէ հիւանդ է , բժիշկներու շատութիւնը կարնոյ մէջ կայ , Վան գրեթէ բժիշկ չը կայ , նմանապէս և դարմանի պէտքերը : Եթէ նա յուսահատեր է . . . իրեն տարագրուելով . « Վան երթայ Ազգ . գործոց չը միջամտէ » , և առանձին վանքը նստի , ուր տեղէն շարունակ աչքի առաջ ունենայ իր նստած առաջնորդարանը , իր այսքան տարուան խաղերը , ներկայացուցած թատերաբեմը և դերասան ընկերները . հանդիսացած ասպարէզը՝ և իրեն նիզակիակիցները . գրաւած , տիրած մեծ վիճակը և անոր վայելքը , և միանդամայն տեսնայ զինքը մօտ և զուրկ անոնցմէ , Նա՛ աւելի կը յուսահատի . . . : Եւ միայն պիտի յուսահատի . ինչե՞ր պիտի յառաջ դան նորին սրբութեան յուսահատութենէն : Ո՞ր Ապօղոսեան կարող է ապահով ապրիլ . ո՞ր վարդապետ կամ եպիսկոպոս կը համարձակի յանձն առնուլ վանայ առաջնորդութիւնը : Լուսահոդի իդնատիս սրբազնի առաջնորդ եղած օրերը ո՞ւր էր Պօղոս վարդապետ , — Կառոց անապատը : Բայց և ո՞վ էր որ այն ահադին բազմութեամբ Աղթամարայ թէմացւոց յարձակում և պաշարում յարոյց Առաջնորդարանին վրայ , այնքան արիւնհեղու-

թիւն պատճառեց , քիչ մնաց իդնատիս սրբազնը մահացնէին : — Քննութեան փորձերը հաստատեցին որ՝ Անապատի կրօնաւոր վանահայր Պօղոս վարդապետն էր ատոր հեղինակը , և այն ժամանակ ալ Պօլայ վարչութիւնն էր դարձեալ , որ իրենց ատենէն և դատաստանէն փախած՝ Տրտպիզոնէն գրած գրով մը հաւատքն ուրացած՝ Պօղոս վարդապետը : այն վարչութիւնը կրսենք ասոր յուսահատութիւնը և ուրացութիւնը դարմանելու համար ոչ միայն արդարութեան վճիռը մէկ կողմը դրաւ , այլ և զանի կտուցայ վանահայրութեան մէջ պահելով , Անապատայ սրբութիւնը պղծուեցաւ ասոր անասէի անբարոյականութեամբ : Անապատայ գանձերը և արդինքները ընդ շունս ուտելով և սփոռելով սպառեց : — Հետազօտեցէք , այն միջոցներուն եկած ամբաստանադիրները — : Այլ և Անապատայ թէմականաց մէջ՝ ոճիր , և անառակութիւն , բարբարոսութիւն , մահ անդամ գործեց : և դեղերուն մէջ անթուելի չարիքներ յառաջացուց :

Կարնոյ Գեր . Յարութիւն սրբազնն , որ քըննիչ եկած էր Վանը , քաջ գիտէ Պօղոս վարդապետի վարքն ու արարքը : Աշխարհահոչակ է այն խօսքը՝ զոր Պօղոս վարդապետ Նորին Սրբազնութեան ըսեր է վանայ Առաջնորդարանին մէջ , երբ կը խրատէ և կը յորդորէ եղեր այս անխրատ ստահակը , նա պատասխանած է , « Սրբազնն , Էյ , ա՛լ պարաթըն . . . ըմ թիմալըն , հիմայ . . . (դաւանանքն է խօսեր) » : Հազիւ Յարութիւն Սրբազնն հեռացուցեր քովէն : Այս , և այսպիսի խօս-

քերը, հանդերձ անլսելի հայհոյութեամբ սովորական է, նորին սրբութեան բերանը, Այս այն անձն է որ՝ այժմ պիտի երթայ Անապատը նստի, առանց Աղդ. գործոց միջամտելու: Նա՝ հոն իր դլուխը պիտի ժողվէ քաղաքէն և գեղերէն իր հացակից և կամակիցները, փոխադարձաբար անոնց այցելութեան պիտի դայ կամ հրառւիրուի, ո՞վ կրնայ արդիլել: Նա՝ կեդրոն տեղ մ'է ընտրեր Անապատ, քրդերուն մերձակայ, և ամէն յարաբերութեանց յարմարագոյն:

Ասոնք հոս կը յիշենք, և գիտենք որ կարնոյ Քաղաքական ժողովն ալ ճանչցած եղեր է զանի. ալ զարմանք չէ որ միջնորդ հանդիսանան անոր աղատութեան: Սակայն, թէ Խրիմեան Սրբազնը և թէ Վարչութիւնը, պէտք չէ իրբեւ միջնորդադիր ըմբռնէ կարնոյ գերը. այլ իրենց համար այս փոքր միջոցին մէջ անտանելի եղած է Պօղոս վարդապետի ներկայութիւնը, և չարիք մակաբերելով անոր գէշյուսահատութենէն, զիրենք աղատ պահելու համար կը գրեն որ՝ Պօղոս վարդապետ վանը զրկուի . . . : Ի՞նչ էին այն հեռագիրները, որ իւչ քիլիսայու Արժ. Վանահայրը կը հաղորդէր. կը խնդրէր թոյլ տալ Պօղոս վարդապետին կարին երթալու, վասն զի հոն ալ անտանելի էր եղած: Վահ, Վան . . . Քու վասառվէ երեսուն տարի է կը պահպանս զայն, որուն ուրիշ քաղաքները երեսուն օր չեն կարող ժուժկալել:

Եւ հոն իրբեւ հիւր, իսկ քո մէջ իրբեւ ներոն:

Գ.

Վարչութիւնը իր որոշումն ետ չ'առնուր, կամ անփոփոխ կը պահէ: Բայց միթէ արդա՞ր է, թողքնէ, և եթէ չէ, թողարդաբութեան յարմարցընէ: Այսպէս ընել՝ փոփոխել չէ, ուղղել է: Կուսակցութեան մը դատը որոշելու համար, կրսեն որ, « Եթէ ձեր ըսածին հաւանինք և իրաւունք ձեզ տանք, այն ժամանակ հակառակ կողմը կը բողոքէ, ի՞նչ ընենք »:

Կուսակցութիւն մը, կողէ երկու անհատ թողը ըլլան, երբ դատուելու կուգան, անշուշտ մէկ կողմն իրաւունքին տէրն է, մէկն ալ անիրաւ. Դատաւորին իմաստութիւնը պիտի որոշէ իրաւունքը որին ըլլալը, և իր վճիռը տայ, մէկային բողոք՝ ի զուր է: Արդ՝ մենք կը խնդրենք քընութեան առնուի. մենք փաստեր պիտի բերենք. և միանդամայն սա ալ կը յայտաբարենք թէ, Այն երկրի մէջ ուստ տան ենք մենք. զօրաւորն՝ մէր հակառակորդն է իր հարստութեամբ, քաղաքականութեամբ և են . ևն . . . : Եթէ մեր մէջ ալ հարուստ և քաղաքական անհատ կը դանուի, երկրորդական են մէկալոնց համեմատութեամբ: Արժ բնական է որ տկարն կը հարստահարուի, աղքատն կը զրկուի, և բողոքելու իրաւունքն առնոր է, և այն՝ հազար ահով կը համարձակի բերան բանալ:

Հազար ահավ՝ կը սենք, վասն զի ասոր փորձն միշտ առած ենք:

Ամէն մէկ անդամին երբ ճիչ մ'արձակեր ենք ,  
երբ ճիգ մը ըրած ենք բողոքելու , սարսափելի  
վտանգներ և վսասներ կրած ենք ու կը կրենք  
ցայսօր մեր հզօր հակառակորդաց ձեռքէն և ի-  
րենց հրամանատար ու կամակատար Պօղոս վ. էն:

Հոս կարճ՝ ՚ի կարճոյ տեղեկացնել կուղենք  
վանայ առաջնորդական դիրքն , թէ ի՞նչ է նա  
Ազգին համար , ի՞նչ է նորա վարմունքը կառա-  
վարութեան հետ , ի՞նչ է իր յարաբերութիւն և  
աղդեցութիւնը դաւառներու հայ և քիւրտ ըը-  
նակչաց ու դաւառապետաց հետ : Թէպէտ վա-  
նայ առաջնորդունն ու անուանեցինք , բայց Պօ-  
ղոս վ. այդ դիրքը իրեն անձնականացուցած է ,  
առաջնորդութեան մէջ և առաջնորդութենէն  
դուրս ալ առաջնորդի նման վարելով և վարուե-  
լով միշտ :

— Վանայ ընդարձակ և բաղմամարդ սահ-  
մանը ամէն կողմէն դրեթէ ընակիչները խա-  
ռըն են Հայք և Քիւրդ , տեղ տեղ ալ Առորիք և  
Եղտիք կան նոյնպէս խառն՝ հայոց և քրդաց հետ-  
Հայերը առ հասարակ գեղերը և տները կը ընա-  
կին . իսկ միւսներէն մաս մը վրանաբնակ են , մաս  
մը դեղ և տուն ունին կամ հայոց տան կից կամ  
գեղի սահմանին կից :

Հին սովորութիւն է որ վանայ հայոց Առաջ-  
նորդ քաղաքական կառավարութեան ազայ կը  
նստէր , և դրեթէ ամէն դատերուն մէջ իր ներ-  
կայութիւն անխափան է : Զանազան քաղաքա-  
կան և առեւտրական , հողային և եղեռնական  
ինդրոց յանձնաժողովներու մէջ կը գտնուի Ա-

ռաջնորդն : Գեղեր և գաւառները քննութիւն մը  
պատահելու լինի , Առաջնորդն ալ քննիչներէն  
մէկն ըլլալ կը հրաւիրուի , կամ իր կողմէն մէկը  
դրկել :

Հայերը իրենց գեղի ու իս — գեղապետը —  
վորխելու համար Առաջնորդն կը գիմեն , Վար-  
ձակալին — չենայն — գէմ բողոքելու համար ,  
Քրդին գէմ , Գայաժառին կամ Ղազին գէմ , զանա-  
զան Թհուրներուն և Չափնաներուն գէմ , վերջապէս ի-  
րենց բարը բողոքները Առաջնորդարանին կուղ-  
դն : Եղնապէս եթէ գողութիւն մը պատահի ,  
կալուածի ու հողի սահմանի կուիւ կամ բաժանա-  
րարութիւնը , մինչև անդամ մարդասպանութիւն  
ալ լինի՝ Առաջնորդարան կը գիմեն , եթէ կան-  
խաւ կառավարութիւնը իմացած ու ձերքակալած  
չէ եղեր : Այս այսպէս ըլլալը , բողոքներու հետ-  
կամ անոնցմէ ալյառաջանցաւորն կը վաղվազէ  
առ Առաջնորդն : Տեսնալու բան է , որ յաճախ  
կը պատահի , Հայոց Առաջնորդարանը կը լիցուէն  
իրարու վրայ Հայու Ռէկիները ու Մէլիքները . Քրդ-  
գերը , Եղտիները , Եղաղափները , Մարպները ,  
(քնչուն) . և այն ինչ զրկեալն կամ վսասեալն որ  
լալով եկած էր Առաջնորդին աղերսած , որպէս  
զի կամ ինքն դատէ կամ միջնորդ հանդիսանայ  
կառավարութեան առաջ իր սսոխը դատել տա-  
լու . յանկարծ այն Ռէկին , Մէլիքն , Շէհնէն , Գո-  
զըն , Եղեռնագործն , Գայրմագամն , Ղատին , Ե-  
ւազափի քիւրտն , Եղտին , չինկանէն , զավթիան ,  
մէմառն , և ով ով է այն ամբաստանեալն՝ կը  
պաշտպանուի , պատիւ և խնամք կը վայելէ : Էտ-

ցոզն կրկին լալով ետ կը դառնայ : Եւ ահա կը տեսնաս Պօղոս վ . Ալայը ետեւէն ձգած , կառնուայն իրեն դիմողները կը տանի փաշային , դովեստներ կը խօսի . շնորհակալութիւն մ'ալ փաշան կուտայ ներկայացողաց և ներկայացնողին , և կը րկին հաստատելով իրենց ունեցած պաշտօնը՝ ետ կը դրկէ զանոնք , ի հարկէ մեծ հատուցումն կայ երախտաւորեալներէն , Բայց մենք կը փութանք ըսելու որ , Պօղոս վ . այսպէս վարուած ըլլալով բոլոր չայ և ոչ հայ երեւելիներուն ու եղեռնադորձներուն իր ազդեցութիւնը կը ցցնէ , և անոնք կը լլան իրեն կամակատար : Կառավարութեան ալ կամինքն իր բերնով և կամ ուրիշներու միջոցաւ կը հասկցընէ . և մտածել կուտայ միանդամյն թէ , Պօղոս վ . Էն կախեալ են վանայ գեղեր և լեռները իրենց բնակիշներով , հարստահարիչները վերսպեալ եղանակով , հարստահարեալները երկիւղով :

Սովորաբար իւր ըրածներն են՝ լուր տալ այս ինչ տեղ ու գեղը , որ բողոք դրեն բերեն , կամ այսքան մարդ քաղաք գան գանդատելու այն կողմի պաշտօնական անձի մը վրայ , և երբ կը յաջողի , — վասն զի անկարելի է որ չգան — կառավարութիւնը կը կանչէ այն անձը դատելու : Կորոտայ , կը կրակի Պօղոս վ . անոր դէմ , իբրև դատախաղ , մինչև կը պարտաւորէ զանի . և փոքր միջոցէ մը զինի երբ կը ճանչնայ ասոր զօրութիւնը , միջնորդ կը ձգէ , ինքն կուգայ անձնատուր կը լինի : Եւ ինչ փրկանք կամ ընծայ որ պէտք է՝ կը մատուցանէ , Պօղոս վ . կը հրամայէ որ մաս մ'ալ

այն ինչ աղային աայ , այն ինչ դրողին , այն ինչ կարդացողին , կառավարչի ծառային , կամ ուղղակի կառավարչին : Եւ վայելողները շնորհակալ կը լլան Պօղոս վ . Էն , շնորհ ալ կը նեն յանցաւորին ներելով ու ըսելով « Պօղոս էֆէնտիին բաշխեցինք դքեզ » . ու դործի վրայ կը դնեն :

Ահա այս է այն մեծ գաղանիքը , որ կը սուիթէ և Պօղոս վ . քիւրդերուն վրայ կը տիրէ , Պօղոս վ . կառավարութեան առջև ազդու է , մարդ կը պաշտպանէ , մարդ կը դրկէ , և թէ՝ Պօղոս վ . ո՛ր քիւրտին որ հրաման ընէ , կուգայ քաղաք . այն ինչ կառավարութեան հրամանաւ շեն դար :

Այս մեր խօսքերը նոյն իսկ Պօղոս վ . պաշտպանողներն ալ պարծանօք կը սեն : Բայց գիտէ՞ք , այն գայմագամ կամ զատին , միւլթէզիմն կամ մէմուրն , մէլիքն կամ էլաղասին , զապթեան կամ եղտին երբ քաղաք կուգան կը կիժուին , անոնք ալ կերթան ժողովուրդէն տանիապատիկ կը կիթեն : Ուր տեղէն է այն ձիերը , այն սովիներ , այն եղեր ու ոչխարները , որ կուգային Պօղոս վ . ին ու անոնց՝ որոնց տալ կուտար Պօղոս վ . : — Անշուշախեղճ գիւղացիներէն առնուած կամ առնելիք էին այդ ամէնը : Սակայն կէտ մ'ալ կայ այս տեղը : Եթէ լինէր փաշա մը կամ քարձք պաշտօնեայ մը որ նկատողութեան առնուր Պօղոս վ . ի այս ընթացքը , և ինքն հետեւէր արդարութեան և տէրութեան օրինաց , ահա այն ժամանակ մարդիկ և գերեր կը տարածուէին ամէն կողմը , քրդերը կոկսէին գողութեան , հայերը հանրագրութեան այդ փաշայի կամ պաշտօնէի դէմը ի մի ձայն կը

բարձրանար բռդոքը, և կիյնար այն կառավարիչ :  
Ասով ալ Պօղոս վ. նոր անուն մը նոր ազդեցու-  
թիւն մը կը շահէր, և եկողը Պօղոսին կը միանար  
կամ անիէ կախածէր : Միւնիֆ վաշան միայն կը  
յիշենք, որպէս ազատամիտ և երկրաշէն ձեռնարկ-  
ները, մի միայն Պօղոս վ. Են չիսրուելուն, անոր  
խարդախ ընթացքը ճանաչելով՝ զանի յանդիմա-  
նելուն, և անոր չհետեւելուն համար, ինկաւ ի-  
րեն պաշտօնին հետ միասին, որուն վրայ շատ ցաւ  
դժացած է և կդդայ ողջամիտ վանցին, վասն զի  
այնպիսի անձ մը, որ կարնոյ մէջ ալ պաշտօն վա-  
րած ըլլալով, այն տեղի ամէն կարգի հասարա-  
կութիւնը դո՞հ ըրած էր : և այն ինչ վանայ մէջ  
ալ սկսաւ ձեռք բերել երկրի մասսիչ, և հառա-  
րակաց հարստահարիչ անձինք, տակէն՝ որովհե-  
տեւ ուրիշ բան և ուրիշ անձն դուրս պիտի ենէր,  
անունարկ ըբին զանի, և շինարարութեան վո-  
խարէն, վանայ աւերտան պատճառ համարեցին :  
«Թոյլէ» ըսին, «չարէ» ըսին: Մեծ սխալմունք մը  
գործեց Պատրիարքարանն ալ որ առանց ստուգե-  
լու՝ հանրադրութեանց նայեցաւ, թագրիր գրեց  
առ Ռ. Դուռը, պաշտօնանկ ընել տուաւ այնպիսի  
հաղուագիւտ փաշայ մը : Պաղաքական մասերու  
մէջ շատ ընդարձակ չենք ուզեր ընթանալ, կրնայ  
ըլլալ որ կտուալարութիւնն ալ յիշեալ Միւնիֆ փա-  
շային գիրը՝ Պօղոս վ. ին վրայ, կարնոյ վալիին,  
և թէ ներկայ Միւնասարիֆին գրածները, թե-  
րեւու ուրիշ անդամ ուրիշներէ գրուածներն ալ  
ուշադրութեան առնու յետոյ բանը շատ կը ծան-  
րանայ :

Հիմայ, ամէնքս ալ ասոնք հասկնալով կընանք  
ըսել ուրեմն թէ, — Այս' Պօղոս վ. բոլոր քրդե-  
րուն կը տիրէ, գայմագամներ կը վերցընէ կը դը-  
նէ, և կառավարութեան մէջն ալ ուզածը յա-  
ռաջ կը տանի, բայց վերսյգրեալ եղանակաւ :  
Այսու հանդերձ՝ նաեւ հասարակ ժողովուրդն  
ալ ուզածին պէս կը կոխէ, ուզածին պէս կը կա-  
խէ : Այս քաղաքականութեամբ՝ վանայ երեւե-  
լիներ և չարագործները բոլորն ալ անձամբ ծա-  
նօթներ, մերձաւորներ, և բարեկամներ եղած են  
Պօղոս վարդապետին :

Շատ մը անառակ, գող և չարագործ զավ-  
թիւններ կան, նկատելու արժանի է՝ որ ատոնք  
Պօղոս հայր սուրբին միջնորդութեամբ ու պաշտ-  
պանութեամբ զավթիւն գրել տրուած են :

Բանտապետներ ու պահապանները նոյնպէս  
նոյն կարգէն :

Ասոնք ամենահլու գործակատար են իրենց  
պաշտպանողին : Բանտարկեալի մը նեղել տալ  
կուտայ, մէկալին արձակ պահէր : Պաշտօնի մը եր-  
թան ասոնք, կը հանդիպին Պօղոս էֆէնտիին,  
հրահանգ կառնուն թէ ի՞նչպէս վարվելու են ի-  
րենց պաշտօնին մէջ, և թէ իրենց գնացած տե-  
ղը կամ ճանապարհին վրայ գործ մը ունի, պատ-  
ուէր կամ հրաման մունի :

Որո՞նք են Պօղոս վարդապետի բարեկամներ  
կամ մարդերը քաղաքի մէջ : — Խւզպաշի Ալի ա-  
զան, Զազա Կօմէրը, և այլն : Քրդերէն՝ Շէմսկի  
Տրպօն, Պաշգալայու Քօռ Կօմէր, և Ալի ազան :  
Նօրտուզայ Տրպաղ, և որ Հոգւոց վանք թալնեց

և Մատթէոս վ. կ'սոլաննէր : — Շատախու Գուրա  
եանցի գիւլ Մէհմէտ և իւր եղբարքը , — որ  
Շատախու եկեղեցիները դոմե հարկաւոր ըրած  
են , ու հայոց գեղեր ու անձինքները իրենց սեպ-  
հականացուցած են , կը կռիեն և կը ծախեն : —  
Մօկաց Ավտալ պէյ , — որ Նէթօյի պէս նշանա-  
ւոր հայ մը սպաննեց , — ու ասոր եղբարք : Գա-  
ւաշու Ցէվրիշ պէյը . — որ Խանմահմուտի եղբայ-  
րըն է , — ու իր որդին Դուլի խան : Կարճկանից  
Ռոստոմ աղան : Մլանցւոց աղաները , Թագուրց-  
ւոց աղանները : Մուկուրցւոց աղանները , — որոց  
մէջ է Մէհմէտ Ալին՝ այն որ Սամանից եկեղե-  
ցին պըզծեց և մինչև կարին բերուեցաւ , բայց  
Պօղոս վ. և պաշտպանութեամբ աղատուեցաւ : —  
Խօշաղայ , և Ռոտանայ ամենագէշ քրդերը : Եղ-  
տիներու աղան Զաթօն : Ամենասոսկալին Սատօն :  
Խակ Հէյտարանցւոց բազմաթիւ աղանները և գը-  
րեթէ բոլոր եւ , որոց բնակութիւնը կսկսի Պար-  
սից սահմանէն Ս. Թագէոս Առաքելց վանքէն ,  
կ'սփոխ բոլոր Ապաղէն — Աբեղեան — , և պարա-  
պատելով Ծաղինայ լեռները կիջնայ Բերկի , Ար-  
ճէշ . Ալճալաղ , Վանայ ծովու եղերքները : Այս  
Հէյտարանցւոց բուն դլսաւորն է Ալի աղան , ո-  
րուն Պօղոս վ. « Հայք ի՞ » կըսէ , և նա՝ ասոր « ու-  
ժէնն , հուժէնն » կը կանչէ : Իրօք ալ այնքան կը սի-  
րեն իրար , որ հարազատ հօր և տղայի առնչու-  
թիւն մը կը կազմեն : Այս Ալի աղան է որ քանի  
անդամ ապստամբելով Օամանեան տէրութենէն՝  
անցեր իր քրդերով Պարսից հողը , և կառավա-  
րութիւնը չկըցեր զանի համադել բերել , Պօղոս վ.

դնացեր բերեր . . . Ասիկայ « Հանաբէ բերելու հա-  
մար զօրանոց մը շինեցին ասոր բնակութեան մօս ,  
մինչև իհիմն քակել տուաւ Ալին , ոչ գայմագոմ՝  
կլնայ նստել հոն , և ոչ զօրք : Ով որ ասոնց մէջ  
առուտուրի կամ ճանապարհորդութեան համար  
երթայ , պէտք է Պօղոս վ. Էն յանձնարարական ըս-  
տանայ : Որին որ ձի , եզ , ոչխար , կամ եկեղեցւոյ  
մը անօթն ու զգեստ , բեռ կամ ստակ ասոնց  
ձեռքով գողցուած ըլլայ , Պօղոս վ. բերել կու-  
տայ , բայց ապրանքի տիրոջն ալ պարտք կը գնէ  
որ շատ մը ընծայ տանի Ալի աղային : Ասոնք՝  
պատրաստ են , երբոր Պօղոս վ. Էն ակնարկ մը  
կամ շվոց մը առնեն , խկոյն զարմեն , թանեն ,  
սպաննեն , և ինչ որ պէտք է ընեն ըստ կամաց  
նորին սրբութեան : Այս ալ այսքանը : Յիշենք ար-  
դեօք Սոսրաթայ Ավտուլլան , որոյ նման եղեռնա-  
գործ մը չըկայ Վանայ մէջ , և որոյ նման մոտերիմ  
և հաւատարիմ մէկը չըկայ Պօղոս հայր սուրբին :

Մենք չենք կրնար ամենքը թուել : Քաղաքի  
մէջ Պօղոս վ. ի բարեկամներ և ընկերներն են  
նաև Ապասօղի Հասան , որ շարունակ գողութեան  
և անառակութեան հետեւ , սարսափելի եղեռնա-  
գործութիւն ալ կը պատմուի ասոր վրայ , բայց  
միշտ աղատ շրջեցաւ չնորհիւ սուրբ հօր : Պօղոս  
հայր սուրբի բարեկամ և խաղ ընկերն է Շէխ  
Հէյտար , Հախտի էֆ . և . . չենք կարող ալ յա-  
ռաջ երթալ ու ասոնց վրայ գրել : Խակ հայերէն  
զինքն պաշտպանողներն այնպիսի անձինք են , ո-  
րոց ըրածները և բարքերը չենք ուզեր հոս նկա-  
րագրել . համեմատութեամբ կը հասկցուի : Պօղոս

կ. իրը քաղաքէն դուրս տեղմը երթալու ըլլայ ,  
կուռ սպառազինութեամբը կը հեծնոյ , իր հանդէսը  
կը բաղկանայ շատ մը ծառաներէ , դուսաններէ ,  
տաճիկներէ , կարդ մը հայերէ , քրդերէ . ձիար-  
շաւ , զինախաղ , նիզակախաղ , արքշիու , մալեդ-  
նած . . . կրսես Շահ Խամայէն է կերթայ ճէնկ՝  
Արապու Զէնկինի հետ , Երեւակացելու է ասոր ի-  
շած ու ելած տեղը , բրած խօսքերը , ցըցուցած-  
շորքները , թէև լինի այն տեղ վանք . Եկեղեցի ,  
գեղ , ընտանեաց ներկայութիւնը , ամէնք մի և  
նոյն է մեր հայր սուրբի համար :

Ըսենք նաև թէ , Պօղոս վ. թէ իրրե Անապա-  
տայ վանահայր , թէ Վանալ Առաջնորդ , սովո-  
րութիւն ունի ազգէն այր և կին իրրե յանցաւոր  
բանտարկել Առաջնորդաբանին մէջ գիշերներ  
և ցորեկները , ծեծել իր ուղածին չափ , նոյնակու  
և գեղերը պատահած ժամանակ չարաշար ծեծ  
քաշել կնկան և էրիկ մարդուն : Այս պարագա-  
ներ հսու կը գրենք , որպէս զի հետագայ գէպքե-  
րը ցանկի մէջ տեսնելով աւելի պարզ հասկցուի ,  
և թէ ինչ չարիք հետեւած են այս ծեծէն հաւա-  
տացուի :

### Դ.

Մենք կը թողումք ինչպէս շատ բաները , նոյն-  
պէս հայր սուրբի զանազան վարմունքները տը-  
նական հրաւերներու կամ հրապարակական հան-  
գէններու մէջ , իր հայհոյութիւնները , տմար-  
դութիւնները , տգիտութիւնները , և կը հրաւե-

րենք մեր հակառակորդները , որ բարեհաճին ի-  
րենց պաշտպանածին բարեմանութիւնները յա-  
ռաջ բերել , եթէ ունի : Իսկ եթէ վարչութիւնն  
ալ մեր այսքան դրածներ քիչ համարի , դժուա-  
րութիւն մը պիտի կը ել տան մեզ ստուար հաւա-  
քածոյ մի կազմել , որ արդէն լրագրաց մէջ կը  
մնայ յիր ու ցան իրրեւ տարեգիր , յիշենք ոյն  
լրագրաց անունները գոնէ : Նախորդ տարինե-  
րու Մելուները , Մասիս , Փարէւ , Սէր , Արեւելքան Փարը ,  
Արարատ , Սէւնադին , Վարդէտայի Հաւորէ , Մանամէ ,  
Օբագիր՝ նախորդ տարիներ , Ժամանակ , Մահուն , և  
Նալբանդեանցին Երիւա Պողոս , ևն :

Իսկ Պատրիարքարանը հասած ու դիզուած  
հանրադրութիւնները և արձանադրութիւնները ,  
եթէ կը պահուին , գոնէ անոնց թող նային միան-  
դամ :

Աւելորդ կը լինէր պահանջել մեր հակառա-  
կորդներէն որ ցոյց տային իրենց պաշտպանած Ա-  
ռաջնորդին ու վարդապետին , իրրե Եկեղեցա-  
կանի կատարած պարտաւորութիւնները , Եկեղե-  
ցական , Պարոցական , ընկերական , առաքինա-  
կան գործքերը . որովհետև դա ստացած չէ իր  
կոչումն այդ արժանաւորութեամբ և պարտա-  
կանութեամբ , մենք իրաւունք չունինք իրմէն  
պահանջել : Մեզ կը մնայ մեր հակառակորդները  
համոզել և վարչութեան հասկցնել , որ այդպիսի  
մէկը՝ կատարեալ պատուհաս մի է ըստ քաղաքա-  
կանին վահայ համար , և անհնարին իրաւար և  
մահ է ըստ բարոյականին՝ Ազգին համար : Յուշ  
պէտք է ածել Վատովուրականի պէս հայտառան

մը ,ուր 180 հազարի չափ բնակիչ կայ , 40 էն աւելի վանքերը , հարիւրաւոր եկեղեցիները , կրօնաստանները , ամէն երկրէն աւելի բաղմաթիւ կրօնաւոր և եկեղեցական ունեցող , բիւրաւոր մանկալիներ . իննեւտասանները դարուս մէջ , սահմանադրութեան օրերը , լուսաւորութեան տարիներու , երբ մանչն ու աղջիկը կրթութիւն կը պահանջեն , երիտասարդները ՚ի ըյս և յընկերութիւն կը գիմեն , ժամանակի պահանջածին համաձայն կսպառեն եկեղեցականներն ալ , կրօնաւորներն ալ , կիններն ալ , և այլ ամէն կարգի անձինք բարեկիրթ և ուսեալ ըլլալ . իսկ այս պահանջմունքներու ժամուն՝ Պօղոս Վ. ը կը տեսնեն իրենց կենաց կառավարութեան դլուխը՝ կամ դեկավար :

Ըլլան դուցէ ոմանք , որ մեր ի վեր նկարագրած Պօղոս Վ. ի վարմունքը խելացի և պիտանի կարծեն , այն տեսութեամբ , որով ոմանք իմաստակներէն այսօր վասակայ ուրացութիւնը , պատճառած աւերմունքը , անոր դատապարտելի գործողութիւնք և յաւխտենական անիծից արժանի վարմունքը , խելացութիւն և օդտակարութիւն կը համարեն , ընդհակառակն դատապարտելով Վարդանաց և զեւողեանց փրկարար միջոցները և անձնութիւնները . որոնք իրենց արիւնը , կեանքը , տունը , գանձը , գերդաստանը , սիրելք և որդիք զոհելով պատճառ եղան Ազգային կենաց պահպանութեան և շարունակութեան մինչ ցայսօր :

Զայս կը յիշենք , վասն զի կը տեսնենք այսօր՝

ուայ մեր ազգային կեանքը ենթարկուած է դըժքաղդաբար վասականման գաղափարներու ազգեցութեանց , և պարսկական կառավարութեան կերպերուն . « Յառաջ կոչելով զանարդու ՚ի պատուականաց , զտգէտս ի գիտնոց , զամենայն արժանաւորսն յետս տանելով , և զանարժանան ի պաշտօն և ի պատիւ կարգելով , զհայր և զորդի ի միմեանց քակելով . . . » :

Վանայ ժողովուրդ իրեն յատուկ եղած ջերմեռանդ բարեպաշտութեամբ կը պաշտէ իր կըրօնքը , կը յարգէ իր արժանաւոր կրօնաւորն . իր միտքն և ջանքն այն չէ որ Պօղոս Վ. իրիկ կըրօնաւոր դատապարտել տայ . այլ նա իր կրօնաւորութեան մէջ ունեցած , իր Առաջնորդութեան մէջ գործած յանցանքներով դատել տայ . յանցանքները՝ որ միայն իր անձին վերաբերեալ մեղքեր չեն , այլ եկեղեցւոյն և ժողովրդեան դայթակղութիւն և վտանգ բերած են . ասոնցմէ զատ , բոլոր աշխարհի մէջ՝ Վասպուրականցին՝ ամօթն և նախատինքը իր վրայ հրաւիրած կըլլար Պօղոս Վ. ի անունով , որ գերախտաբար այս երկրին ալ ծնունդն է . սակայն վառք Նախախմութեան որ Խրիմեաններ ալ հանած է մեր հայրենեաց մէջ . պարծանք Վասպուրականցւոց և ներկայ բոլոր Հայութեան :

և անոնց համար յատուկ բողոքովները մի առ մի  
կանչուելով հարցվեցաւ :

« Նախ. — Վահայ Այգեստանի մէջ վատահամ  
բաւ կնկան մը տունը յաճախելը » « Ներկայացաւ  
յառաջ Աճեմեան Մ. Դրիգոր ու ըստ , Ես Ցեց-  
եան Գրիգորի և Նիկողոսի հետ վան ժողովական  
իքէն՝ Այգեստանի թաղին բնակիչքը Եկան բողո-  
քեցին Պօղոս Վ. ին այս վատ կնկանը համար թէ ,  
մենք չենք ուզեր այս կինը որ մեր թաղը մնայ :  
Պօղոս Վ. ըստ որ , ուրիշ տուն չկայ ուր պատրո-  
պարուի այս կինը : Ան ատեն աղաղակեցին բնա-  
կիչքը , թէ՝ Քեզի համար պահեր ես այն կինը ,  
որ ստէպ երթեւեկութիւն ընես » :

« Երկրորդ. — Իր պատշաճ նժոյդը գինիով մե-  
ծարելով արհեստական կատաղութեամբ վարժե-  
ցընել : Այս յանցանքը հաստատելու համար Տիւղ-  
եանց տան պաշտօնեաց Գրիգորը պիտի գոյ :

« Երրորդ. — Աւանցի Մանուկին կինը ուրիշ մէ-  
կու մը հետ պսակելը » : — « Ուկայութեան Եկատ Յօ-  
հանեան Աբրահամը , որ Խոկէլէ գիւղէն նաւա-  
վար ըլլալով՝ Առէն գիւղը երթալու ժամանակ  
այս յիշեալ Մանուկը հետ տարեր է վաստակի մը  
համար , հոն Մանուկ գործով քանի մ'օրը կը մը  
նայ . Աբրահամ ետ գառնալով կը լսէ որ Մա-  
նուկին կինը նշանված է : Գացեր Պօղոս Վ. ին ը-  
սեր է որ՝ Մանուկը ողջ է , ինչպէս կինը կը նշան-  
ուի : Պօղոս Վ. կը պատասխանէ՝ հապա մեզի ը-  
սին որ մանուկը մեռած է : Աբրահամնորէն ըսեր  
է , Ես քանի մ'օրէ որ քովէն կուգամ : Այն ժա-  
մանակ կրիւք պատասխաներ է Պօղոս Վ. Մանու-

Ե.

# ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱԳՈՏ ՑԱՆԿ

### ՊՕՀՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

#### ՅԱՆՑԱՆԱՑ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՆԼԻՆ  
ՔԱՂՈՒԾ

(Ի 1863 ամ սեպտեմբեր 10)

Վանայ Անապատի Վանանայր Պօղոս Վ. ին վրայօք  
եղած վեճերուն համար յանձնաժողովը<sup>(1)</sup> գումա-  
րեցաւ Երկու կողմէն ներկայ գումակով :

1860 ՀՈՒՅ. Յ. — ՆԻՍՏ Բ.

• • • Մահսերագրութեան մէջ դրուած յան-  
ցանքները մէկիկ մէկիկ քննութեան մունել սկսաւ .

(1) Յանձնաժողովոյն անդամոց ցանկին մէջ նորա-  
տունեւան Մեծ Արքոն էֆէնտիի անունն ալ կայ , որ բա-  
րերազդաբար այսօր ալ քաղաքական ժողովոյ անդամ է .  
բայց գժրազդաբար իր ստորագրած հին վճիռները այսօր  
մոռցեր է :

կըն ա՛լ կինը պահելու ժամանակ չունի եղեր : Եւ այսպէս կինը պահեր է Նորեղի Մելքոնին հետ ։ Ասանկ ըլլալ գիտցողները կան ևս , Սէֆէր , Գրիգոր . Յօհաննէս և Մ . Յարութիւն :

« Չորրորդ . — Ուէիս Սինանին անողորմաբար ծեծի տակ կաշին քերթուիլը » . — « Ինքն ուէիս Սինան պիտի դայ ու իր դատը պիտի վարէ քանի մ'օրէն » :

« Հինգերորդ . — Տըլաշէնցի քահանային ծեծուիլը մահու չափ » : — « Ասիկայ հաստատելու համար խուրուչէմէ գտնուող Տ . Սարդիս և քանակոծ քահանային եղբայր Ալլահվէրտին պիտի գան » :

« Վեցերորդ . — Սիսկայեցի ուէիս Գրիգոր չարաչար ծեծուելով աչուրներէն զրկուիլը » : — « Ասոր համար ալ վկայեց խաչվէծի Պուտախնեան վարդան , ինքն ականատես ըլլալով , ու ըսաւ , Այս Սիսկայեցի Գրիգորը իր հանգուցեալ Մանուկ եղբօր կինը պակասութեան մը մէջ տեսնալով ծեծերէ , այդ կինը իր մարմինը սեւագոյն ներկելով ներկելով գացեր բողոքեր է Պօղոս վ. ին . այս վարդապետն ալ զԴրիգոր կանչելով և պատճառը ամենեւին չհարցնելով այնչափ ծեծեց Խրապաճով , մինչև աչուրներէն միշտ արցունք կը հոսի ցայժմ և լըսը նուազած է : Եւ թէ որ կամիք , Հեւսէյին պէյի քով , Այսվագ Մարկոսն ալ գիտէ , կանչեցէք և ստուգեցէք » :

« Կօթներորդ . — Յարութիւն ժամակոչին արևինաթաթաւ ծեծուիլը . » — « Այս մարդը հոս է եղեր , ինքը պիտի ներկայանայ » :

« Ութներորդ . — Ըրդատպաշի Յակոբ յաւաղին սրտիւ բողոքեց , թէ՝ Մենք ընտանեօք Վարդավառի տօնախմբութեան օր մը Վարադայ վանքը գայցինք քանի մը սէխարներով , հոն Պօղոս վարդապետը մեր մէջը եղեւ մուտ ընելով և ո՞գիտէ ինչ արհեստիւ մեր հարսը դբակստ անուանեալ պարտէզը տարաւ , ևն . . . :

Այս եղելութիւնը վերջը տմենուն բերանը Էյնալով համբաւեցաւ , և այժմ գիտեն ի լրոյ Մարդար քետէնեայ , Աւետիս , Պետոն , Աւան օղլու Մուշատ , բեռնակիր Գալուստը մըսքը ձարշին » :

« Ինն » — Աշճի Կարապետը դառն սրտիւ բողոքեց ու ըսաւ , Տղան՝ եկեղեցին գանձանակէն ուրիշ ազագ հետ քանի մը գրամ գողցեր էր մանկական անդիտութեամբ , և անդամ մ'ալ մեր աղդական Ալիւրցի վարդանի տունը մնառեկէն երեք մատնի կը վերցընէ , որոց արժողութիւնը 40-50 զրշէ , մէկը մաման կուտայ , երկուքը քանի մը զրչի կը ծախէ շահիներուն , որոնցմէ վերջը առի քանի մը դուրսւով , բայց այս եղելութիւնները քանի մը ամիս անցնելէն ետքը՝ գիւղին ուէիսին հետ կուտեցայ պատժական անցքով մը . Այս ուէիսը գացած Պօղոս վարդապետին հրամայած է զատապարտել զիս չարաշար . վասնույ Պօղոս վարդապետ իր ծառացն բարբարոս քիւրաը կը զրկէ կինս կանչելու , ես կրիւք մը ըսի քիւրակին , ես հոս եմ , և աղին հայրն եմ , ինձի ինչու չափեր Պօղոս վարդապետ . Ինձի հրաման կինդտանելին է՝ ըսաւ քիւրաը , ու բռնութեամբ տարաւ : Ես ալ պարտաւորեցայ ինուս հետը երթաւ . 3

լու և իմանալու թէ՝ ի՞նչ է կնոջս կանչուելուն պատճառը՝ Բայց սարսափեցայ, յիմարեցայ, յափշտակեցայ տեսնելով կինս ժամկոչի մը կոնակը ելլել, և կէս մը Պօղոս վարդապետէն, կէս մը անբարբարոս քիւրտէն չարաչար և անինայ ծեծուիլը, և մինչեւ ծեծին չարաչար հարուածուելէն՝ վիժիլը: Ասոնք տեսնելով գրեթէ խելքս դիլսէս երթալով աղաղակեցի, « Վարդապետ, տեսած դատաստանդ՝ սատանան չ'տեսներ»: Այս խօսքիս վըրայ ինձի ալ պառկեցուց և քանի մ'հարիւր փայտ զարկաւ այն քիւրտին ծեռքով: Աշճի Մարդարը վկայութեան եկաւ, ըսելով, Ես հոն ոչօքս տեսայ որ Պօղոս վարդապետ իր ծեռօք այն կինը շատ մը ծեծելէն ետքը, քիւրտին յանձնեց եւս ծեծել, ու երբոր այրը ըսաւ, « Քու տեսած դատպատանան չ'տեսներ», ծդեց կինը, այրը պառկեցընել հրամացեց և այնչափ ծեծեց, որ քանի մը ամիս հիւանդութիւն կրեց այս մարդը: Եւ ուրիշ դիացողներ ալ կան, Նորատունկեան Սիմոնիկ ազացի սպասաւոր ալիւրցի Յարութիւնը, Տավուճեան Ասլան և Մարտիրոս, Վանցեան Պազտասար:

« Հակառակ կողմէն, ( այսինքն Պօղոս վարդապետ պաշտպանողներէն ), ալիւրցի վարդան ըսաւ, « Այն տղան երեք մատնի գողնալով մեր սնտուկէն, մէկը մամուն կուտայ՝ երկուքը իր մօր, թէ այս մատնիներուն, թէ գանձանակէն գրամ գողնալուն համար Պօղոս վարդապետ կանչեց տղին մայրը, կէս մը ինքն, կէս մը քիւրտը՝ ծեծեցին, և երբոր այս կարապետը « Քու տեսած դատպատանդ սա-

տանան չտեսներ և ըսաւ, կինը ձգեց, կարապետը ծեծելսկաւ »:

Նոյնպէս հակառակ կողմէն պարտիզպան Յառութիւնն ըսաւ, « Այս կարապետի աղան ուրիշ տղոց հետ գանձանակէն գրամ կը գողնացին, և անգամ մըն ալ վարդանին տունէն երեք մատնի գողցան, մէկը մամուն տուած էր, երկուքը մօր: Այս բողոքներուն համար Պօղոս վարդապետ կանչեց տղին մայրը՝ առաջ իր ծեռօք ետքը քիւրտին ծեռօք ծեծեց, պյուր խոտագոյն պատասխանեց նէ, ան ալ ծեծեց »:

« Տասն » - Պօղոս վարդապետին անլուր հայհայութիւնները թէ նոյն տեղի բնակչոց և թէ Պօղուեցոց՝ վկայեց Մուրատը ու ըսաւ, « Վուանկա գացողներուն պատճառը հարցնելու եկողներ եղաւ նէ, զօրականաց հրամացեց՝ Այս շուները դուրս հանեցէք, բերներնուն . . . այս ինչը . . . կը հոտի, Ուրիշ գիտցողներ ալ կան, Հայրադետ ազացի եղբայր Յակոբը »:

— Ծանօթանիւն: Այս վերջին պարբերութեան մէջ « Վուանկա գացողներու » յիշատակութիւնը խիստ հետաքրքրական է, և գրեթէ վանսաց սոսկալի և անհաշտելի խուվութեանց բուն առիթ: 1836 թուին Առաջնորդ Գարբիէլ եպիսկոպոս և հայ աղաներէն քանիվը կը խորհին աղդացին կալուած մը շինել զօրանացի համար, որպէս զի տերութեան զօրքերը քաղաք մտած ժամանակ տըները չը պարպեն զօրք նստեցնեն: Ասոր շինութեան փայտ և ծախքը կը բաժանեն իւրաքանչիւր հայուն վրաց, և Պօղոս վարպապետ՝ որ վոխանորդ

էր, զօրականներով տեսուչ կը կարգուի բաժին-ները հաւաքելու անձամբ գնալով տուները : Շատերը անարդար գտան այդ բաժնանմունքը, և շատ տուներ ալ ծեծ և բռնաբարութիւն կրելով այս մասին տեսուչ հայրսուրբէն, բողոքողներ եւ լան հրապարակ, բողոքողաց գլխաւորներէն պատուաւոր կարգի անձինք բռնուեցան և փուանկայի զարնուելով Շամիրամակերտիներքին բերդը բանտարգել եղան, և Պայտալան ու ուրիշ տեղ աքսորուեցան, իբրև թէ Խան Ավտալն և Խան Մահմուտ՝ տէրութեան ապստամբներ լինէին դոքա, թէպէտ այսպէս սարսափեցնելով հաստրակութիւնը՝ ի դլուխ տարին իրենց ձեռնարկը, բայց այն օրուընէ մինչ այսօր այդ որոշում ընող ժողովականք՝ որոցմէ քանիսը մեռած են, և Պօղոս վարդապետը՝ ատելի դարձած են հասարակութեան : Բայց և այն ալ եղաւ պատճառ մը, որով համարձակութիւն առին ժողովուրդք իշխանաց ու Առաջնորդի անիրաւ որոշմանց դէմ ձայն բարձրացընելու, այն ինչ մինչև այն կէտը՝ երրէք օրինակը տեսնուած չէր : Այս սկզբունքը գնալով հետզետէ յառաջացաւ, և մինչև ցայսօր միշտ իշխան ըստածները զժողովուրդ ճնշելու և սուրեկաբար լւեցնելու, ու ժողովուրդն ալ՝ իշխանաց բըսնութիւն ու միապետութիւնը ջնշելու փորձեր ընելու հետ են, երկու կողմէն ալ վնաս քաշելով : Պօղոս վարդապետն ալ իբրև իսկզբաննէ իշխանաց կողմի մարդ և անոնց կամաց գործադիր ինքն կը ջանայ, և իշխանք կը ջանան որ նա տիրանայ, որով և յաղթեն, և ընդհակառակն ժող

զովաւրդը ինքնինքը պաշտպանելու համար Գլ  
և Էնէնէ Շէս, միշտ կը զարնուի, բայց և միշտ կը  
բողոքէ:

1860 ՀՈԿՏԵՄԲԵՐ 5 ՆԻՍ 9.

«Այսօր երկար բանակռութիւններէն ետքը  
միաբանեցան այս կէտին վրայ, որով իգնատիոս  
եպիսկոպոս ըլլայ այսուհետեւ Առաջնորդ, և ոչ  
Պօղոս վարդապետ Եւ Պօղոս վարդապետ ՈՉ ՎԱ-  
ՆԱՀԱՅԹ Պիծի ԸԼԱՅԹ և ՈՉ ՎԱՆԱՅ ՍԱՀՄԱՆԸ  
Պիծի ՄՏՆԻ Հապա Պօլսէն հաճութեամբ և հր-  
բամանաւ աղդ. Ժողովոց ուրեւ Գէւ ընտրուի »:

Դասընթացի պահանջման արվածներուն ժաղացած

1860 ՆՈՅԵՄԲՐԻ 2

« Կոռուց Անապատի՝ վանահայր Պօղոս վարդապետին համար կրօնական ժողովը՝ տեղեկագիր մը ներկայացուց ժողովին, որով վճռեր է թէ, — Որովհետեւ յիշեալ Պօղոս վարդապետ դեռ դատաստանի ներքեւ եղած ըլլալով առանց հրամանի փախեր է Պօլիսէն, ալ այսուհետեւ ՎԱՆԱՀԱՅՐ ԶԿՐՅԱՐ ԸԼԼԱԼ նոյն վանքին. ԱՅՍ ԻՐԱՒՈՒՆՔԵՆ ԳԼԽՈՎԱՆ ԶՐԿՈՒԱԾ է, և կը խնդրէ որ նոյն աշխատանք եկեղեցականը նորէն Բ. Դրան հրամանաւ հոս բերուի » :

« Որոշում՝ — Քաղ. Ժողովն ընդունեց կրօնական ժողովին վճիռը, բայց որոշեց որ հու քե-

բել տալու համար Բ. Դրան թագրիր գրելէն առաջ՝ նոյն վարդապետին հսու դանուող կուսակիցներն կանչուին, և անոնց իմաց տրուելով այս որոշումն, ժամանակ մ'ալ տրուի իրենց, դուցէ իրենք դրեն Պօղոս վարդապետին որ դայ: Խակ կառոց Անապատի միաբանութեան պիտի գրուի որ այսուհետեւ վանահայրը Նշանաձայն Պօղոս վարդապետ»:

1860 ՆՈՅԵՄԲՐԵՐ 44

«Կառոց Անապատի վանահայրը Պօղոս վարդապետին Տրասփիզօնէն դրուած նստմակը կարդացուեցաւ, որով կիմացնէ, Ս. Պատրիարքին հ. Քաղ. ժողովին թէ, թէ որ զինքը տուանց նորէն քննութեան կանչուելու ի Պօղոս, կառոց Անապատի վանահայր կը ճանչնան նէ՝ լու, ապա թէ ոչ հոռվիմէական պիտի ըլլայ . . . . :

1861 ՅՈՒՆՎԱՐ 4.

«Վանցի Պօղոս վարդապետին դորձը համառուսիւ մը կաթողիկոսին դրուելու է անմիջապէս, որովէս զի չըլլայ որ խարուելով պատուափրէ, և լն»:

«Նմանապէս նոյն վարդապետին դիր գրել պէտք է որ մինչեւ երկու ամիս դայ ներկայանայ կրօնական ժողովին, զինքը աբդաբացնելու համար, ապա թէ ոչ նոյն պայմանաժամը լրանալուն եթէ անձամբ չներկայանայ, իրեն ՎՐԱՅ ԵՂԱԾ

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՏՈՒՎԱԿԻ ԿՐԱԼԱՑ, Ուստի և կրօնական ժողովը վերջին վը-ճիռը պիտի տայ»:

1861 ՅՈՒՆՎԱՐ 27.

«Դարձեալ այս նիստին մէջ ալ որոշուեցաւ որ Վանցի Պօղոս վարդապետ հսու բերվելու համար պէտք եղած ամէն ազդու միջոց ձեռք առնուի, ինչպէս որ կրօնական ժողովը վճռեր է. և պէտք եղած դրերը ապսպրուեցաւ»:

Զ.

Այդքան մը կրցած ենք ձեռք բերել Պատրիարքանի արձանագրութեանց հատ ու կտորները Պօղոս վարդապետի մասին: Հետաքրքրական էր որ ամբողջն տեսնուէր, սակայն այսշափով ալ խնդիրը բաւական պարզ կը տեսնուի, Պօղոս վարդապետ բաւական կը ծանօթանայ, Վարչութեանց դրերու օրինակները, կամ վանէն, Անապատէն ու Պօղոս վարդապետէն այդ միջոցներու մէջ փոխանցուած դրութիւններու պատճէնները առ ձեռն չունինք»:

Պօղոս վարդապետին Պօղուէն ՚ի վան վախչելուն միջոցները՝ Վանայ Առաջնորդ Խդնատիս վարդապետ գնացած էր սուրբ Էջմիածին եպիսկոպոս օծուելու, և իրեն փոխանորդ թողած էր Վանայ մէջ Թագէոս վարդապետ: Սոյն միջոցին այն խնդրոյն վերաբերեալ յիշեալ Թագէոս վար-

գաղետէն՝ 'ի պատրիարքարան դրուած երկու պաշտօնական նամակներու պատճէնը կը գնենք այս տեղ։ թէ այս, և թէ ետքէն յէշելիք նամակներու բնագիրը պատրաստ ենք ժողովզն ցուցնելու, երբ քննութեան համար ատեան բանն և արձանագրութեան սկսին։

### ՆԱՄԱՊԱՏԻՒ ԵՎ ՎԵՇԱՊԱռ բարձր որբագնութիւն Առաւածախնամ Տէր իմ։

Փոխանորդական պաշտօն ստիպէ զանարժանս ոչ երբէք կասել յետս, այլ փոփթալ հազրոցել զլուրս իտեղեկութիւն սրբազան Տէրութեան ձերում։

Յանցելումն զրեալ ծանուցի ձերդ վեհափառութեան գուասունէն կուոց Անապսոսայ վանահօր Պօղոս վարդապետի 'ի Վան քաղաք, այժմ պարտք անձին համարիմ ծանուցանել զնեւեւորդս նմին խոստովանաբար՝ առնեայն ճշմարտութեամբ։

Եոյն վարդապետն 'ի մօտենէն 'ի քաղաքու ունէր կախեալ զիրծոց իւրոց զնշանն արքունի զմնացեալն 'ի Կարբէէն հանգուցեալ սրբազան եպիփառապաէն, եւ յաջմէ յահեկէ պար առեալ 'ի համախոնիցն իւրոց, եւ այսպէս եկեալ եմուս 'ի քաղաքամէջս եւ մոեալ 'ի տան կուոց Անապատին բազմեցաւ։ Այս եղեւ յերեսներորդ աւուր նոյնմբեր ամոյ։ Յետ երից աւուրց՝ յաւուր չաբաթու երեք ունաք յականաւորաց քաղաքիս առեալ ածին զնա 'ի տուն կուսակալին, որոյ վեևմաթեան ոչ զտեալ ներկայ՝ աեսութիւն առնէ ընդ աւագորեարս զրանն եւ դառնայ 'ի տուն Մահամեսի նարսն պէ յին յայգեստան։

Եւ ընդ առաւօսն՝ որ կիւրակէ լուսանայր, ելեալ դնաց 'ի նորաշէն սուրբ Առաւածածին եկեղեցին փիւնաւ եւ վիզարիւ, եւ զկեցոցի աւետարանն կարդաց եւ

ելանէ արտաքս 'ի նոյն ցերեկի դարձեալ առնէ զերիս այլ եւս ումանս ընդ իւր եւ զնայ 'ի տհսութիւն կուսակալին, եւ տեսեալ զնա դարձ առնէ 'ի քաղաք 'ի տուն կատաց Անապատին։

Քաղաքս մեր տարեւոր միջնցաւ կացր 'ի հանգարատութիւն, եւ ժողովուրդ համայն սիրով վարեալք ընդ միմեանս, բայց 'ի մասնել այն վարդապետի աստ նոր 'ի նորոց միսաւ 'ի վեր երեւել հակառակութեանց եւ բանակուտութեանց, եւ սա առանց հայելոյ յիւր թշուառ վիճակ արգելանաց 'ի հոգեւոր պաշտամուն անխիղճ եւ անխափիր յարձակեցաւ 'ի նոյն, եւ ոչ միայն այս, այլ եւ զօր ամենայն խորհուրդս առնէ ընդ համախոնս իւր եւ հոչակ հարկանէ զինքենէ թէ՝ Պատրիարքական կոնդակաւ եւ արքունի հրովարտակաւ հաստատեալ իցէ Առաջնորդ Վանայ վանուրոց պարզամիտ ժողովուրդ չգիտելով զիսկութիւն իրին անշաղար երթեւեկս առնէ 'ի տեսութիւն իւր, եւ այսպէս նոր 'ի նորոց արծագուէ ըդ խախանեալ կուսակցութիւն Ազգային 'ի մնեց ցաւ եւ 'ի վիշտ ազգասէր սրտից Զայսութիկ ծանուցեալ առ իզերծ մնալոց 'ի պատուհանէ, որ առաջի կայ նուպասիս, եթէ ոչ ծանուցանէի, այսուհետեւ կամք եւ հաճութիւն Զեր վեհափառ բարձրագոյն Նրբագնութենէ։

Որոց եմ եւ մատ ամենախխնարհ ծառայ եւ աղօթարար

Առաջնորդութեան Փոք. Յարեւու լ.

'ի գեկտ 7. 1860 (Անկը)

'ի Վան յԱռաջնորդաբան։

Յ. Գ. Նորաշէնու սուրբ Առաւածածին եկեղեցւոյ ժամարարն յանցեալ կիւրակէ 'ի ժամ սուրբ Պատարացին յիշառակեալէ զօղոս Վ. Առաջնորդ հայրն տակաւին չէ զարձեալ յէջմանէն 'ի Վան քաղաք։

ՆԱՄԱԿԻ Բ.

Ամենապատիւ և վեհափառ բարձր սրբազնութեան  
Աստուածախնամ Տէր .

Զօրհնալիք նամակ Մեծի վեհափառութեանդ ընթեռ  
Ալով տեղեկանամք թէ Վասոցի Պօգոս վարդապետն ան-  
կանելով ընդ անհնազանդութեան դատաստանաւ փա-  
խրատեամբ ՚ի մայրաքազաքէդ ինքնին կորուսեալ է ըդ  
վանահայրութիւն իւր .

Եւ վասն պահելոյ ոխս ընդ բազումն ՚ի Վանայ ժո-  
ղովրդոց, և ընդ այս զխոսվաւթիւն, ամին իրի ոչ կա-  
րէ ՚ի հոգեւոր պաշտամունս մերձենալ : Այսոցիկ անջր-  
ութիւն վճռոց ինքնին իսկ քաջ տեղեակ է, ոչ միայն ՚ի հր-  
բատարակելոյ ազգային լրագրաց, այլ և ՚ի նամակէ  
բարձու սրբազնութեանդ, որ առ միաբանութիւն կատաց  
սուրբ Անապատի, ՚ի վերայ այսր ամենայնի տակաւին  
ոչ զգաստանայ և ոչ յանձն առնու կատարել զայսոսիկ  
հրամանս, այլ ընդ վշեալ ապստամբութեամբ ընդ ձե-  
ռամբ ունի զկտուց Անապատն, և մերձենայ իսկ ՚ի հո-  
գեւոր պաշտամունս, որպէս յանցելումն յաւուր տօնի  
սրբազնն Առաքելոցն Պետրոսի և Պողոսի իշեալ յԱնա-  
պատէ ՚ի քաղաք վեղարաւ և վիլոնիւ և կանգնեցաւ ՚ի  
գասն Նորաշէն սուրբ Աստուածածնի և կեղեցւոյն տօն  
մեծահանդէս կատարեաց և ՚ի սուրբ Պատարագին և տ  
յիշատակել զանուն խոր այսպէս, և Եւ զառաջի կացեալ  
վանակին առաջնորդական վոխանորդ զջէր Պօգոս ծայ-  
րագոյն աստուածիմաստ վարդապետն շնորհեցես մեզ-  
եւային : Եւ ոչ միայն այս, այլ և երբեմն գնայ ՚ի  
կտուց Անապատն եւ շրջի ՚ի թէմս նորա և սրտապնդէ  
զմիաբանութիւն եւ զժողովուրդն, և երբեմն եկեալ ՚ի  
քաղաքն շրջի ՚ի տունս տունս եւ պզսորէ զպարզամիսս  
կուսակցացն իւրոց եւ որումն սերմանէ ՚ի նոսա և յատին  
յարուցանէ, որով նոր ՚ի նորոյ արձարձէ զխոսվութիւն,  
որ ՚ի վագուց հետէ սփոշիացեալ և իրը անհետ եղեալ

Եր : Վասն սրոյ յաւեցեալ մեր ՚ի հոգիս ընդ այս զըժ-  
քախառութեան ողորմելի ժողովրդեանս այսողիկ հարկ  
համարեցայ այսու ծառայական դրովս զամենն ձշգիւ և  
առանց աշառութեան յայսնել ձերտւմ վեհափառութեան,  
աղաչելով զձեղ չնորհ արարեալ ժամ յառաջ դառաջս  
առնու զչարեցս, զի այս կայծ չարութեան փոքր փոքր  
արծարծեալ մի վառեցէ զիսզալի հասարակութիւնն ,  
որով յետինն անշուշտ չար լինի քան զառաջինն : Այս-  
չափ ծանուցեալ ՚ի կարծոյ մնամ վասն ձեր սրբազնն եւ  
մնզին կենաց երկարութեան միշտ աղօթարար և պար-  
տաւոր կենօք բարեմաղթ :

Առաջնորդական վոխանորդ

՚ի յունիար 4. 1861 թարեան վ. Նշուր ժառաւ  
՚ի Վան յԱռաջնորդարանին : (Յնիք)

Լ.

ՊՕՂՈՍ Վ. Ի ԿԵԱՆՔԻՆ ՔԱՆԻ ՄՐ ԳԻԾԵՐ

Պօղոսը Պօլիսէն վրախոչելով Վան հասած օրերը  
իդնասինս եպիսկոպոսին գլխուն սրբագրեալի  
փորձանքներ բերաւ . Առաջնորդարանը կոխել տը-  
զաւ . և եղբայր եղբօր զէմ հանելով արիւն հոսե-  
ցըներու տոիթ եղաւ : Այս ահադին զէպքը աշ-  
խարհին յայանի է :

Պօղոսը Անապատի վանահայրութեան միջոցին  
վանքի անթիւ հարստութիւնը ընդ շունս և ընդ  
պունիկս վասնեց, որոյ մատին Անապատի միա-  
բանք համբաղբան են ՚ի Պատրիարքաբան մանբա-  
նան, և նոյն Անապատին առաջնորդարանի մէջ  
չէվրիչ պէյի հետ եկեղեցւոյ վարագուրի ետեւը

Հայել խաղցնել և պղծագործութիւններ ընելը տամաւոն գիտցած բանն է, և Զաղար վարդապետի գրելէն ալ կ'ստուգուի :

Կտուց Անապատի միաբան Երեսնամեոց Ռափոյէլ վ. Պօղոսէն չարաչար ծեծուելով, ուկորներ փշրեցան . անդամներ լուծուեցան . և քաղաք բերուելով անդաբամնելի ըլլալով՝ մեռաւ :

Կտուց Անապատաց արաերը հնձելուն, Ավելը դիւղի կանանց վագրաց հանելու համար Պօղոս անձամբ գնացած էր . և կիրակոսեան կարապետի կինը նոյն օրը հայ եվելու և օրօրոցի մանուկը խնամելու առթիւ չէր կրցեր հասարակաց հետ երթալ . Պօղոս անոր տան մէջ կը յարձակի, խեղճ կինը անխնաց կը դանակոծէ . կնոջ էրիկ վրայ կը հասնի, և կը յանդգնի ինքն ալ Պօղոսին վրայ յարձակիլ, յանկարծ Պօղոսի մարդիկ կը հասնին, մարդք աղէկ մը կը ծեծեն . ապա բանստարկել տալով 300 զուրուշ տուգանքով հազիւ կ'աղտափի :

Ավելցի Տ. Յօհաննէսեան կարապետը՝ որ Պօղոսին Պօլիս եղած տարին բողոքողներէն մէկն էր, Պօլիսէն վերադառնալուն՝ Պօղոս կը զրկէ իր ծառան քիւրտ Տէվրիշ և Թալալեան Սորբիսը՝ դիշերանց անկողնոյ մէջ բռնել տալով զկարապետը, և անոր ձեռք ու ոտքը կապած կը բերեն Պօղոսին . կարապետի գլուխը իր Նաղար ծառացին բռնել կուտաց և սոներուն վրայ երկու մարդ կը նստեցնէ<sup>(1)</sup> հաճի սահմարդուայնքան կը զարնէ, մին-

(1) « Հաճի սահմարդ Պօղոսի մարդածէծ վացան է խիստ ծանր և կարծը, որուն վրայ դրել տուածէ . « Հաճի սահմարդ տըր, եօլսուզմբա եօլ կէօթէրիլ » :

չեւ Երիտասարգի բերնէն արիւն կը հսոի : Եւ ուս կորները փշրելով, տարիմը անդամալցյծ կը հեծէ, ու կը մեռնի :

Ալիւրցի Շաղյեան Մարտիրոսին չարաչար ծեծեց Պօղոս, որ հազիւ մեռնելէ պրծաւ :

Պօղոսի տիւմպէլէկճի Խաչատուրը Մարմետցի Քօլողեան Յօհաննէսի կինը պղծած և վերջը թոյնով վիժել տուած միջացին կինը չը դիմանաբով մեռաւ . երբ տարը էրիկ Պօլսէն կուդայ, և բողոքը կընէ . Պօղոսը զանի սաստիկ կը ծեծէ, որ չարաչար հիւանդնալով՝ ան ալ կը մեռնի :

Մարմետ գիւղի ուսումնական Տ. կարապետ քահանացն Պօղոսին կը կանչուի Անապատ, ճանապարհին Պօղոս կը յարձակի քահանացին վրայ մօրուքը կը փետաէ և մերձ ի մահ կը գանակոծէ, և քառուն աւուր չափ ալ Անապատի մէջ կը բանտարկէ, զոր վերջը հիւծեալ վիճակի մէջ կը վերադարձնեն գեղը, որ երեք օրէն կը վախճանի :

Ալլցի Յորյեան Ոէս Յարութիւնը Մարմետ բերել տալով չարաչար ծեծեց, որ բողոքովին անբզդայ եղաւ, միմիացն Պօղոսի Այդեպանին « կորսուի » ըսելուն համար :

Փիրզարիպցի Ոէիս Սարդսի աղջիկը չարաչար ծեծեց և միւնոյն միջացին Ա. Պատարագ մատոյց :

Ալլցի Սանօյի հարուը, որ Անապատի ոնտեան էր, կը յղանաց, կը ծնի, և Պօղոսէն կը համբաւուի :

Աննաց վանից Ոէս Յարութիւնի գլխուն այնպէս ուժով փայտ մը իջեցուց, որոյ դլուխը ճեղքուեցաւ, և աչքերու լյուր քաղուեցաւ :

Մարմետցի ջաղացան կարապետը 900 գրշ.

Յոստաննալով Պօղոսին . Պօղոսը Տըլաշէնսց վարժակալարին հետ ամռանանալու խօսք տուաղ խաւ և նցի գէօզէլ անուն կինը գեղէն բռնութեամբ բերել տուաւ և շատ մը ծեծելէն յետոյ իր ձեռքով պատկեց նոյն ջաղացպանին հետ . այս առթիւ Տըլաշէնսց Ցէր Յակոբը՝ որ Վարդաղարի եղբայրն էր , միջամառութիւն ընելուն համար , Պօղոսէն չառաջար քանակոծուելով ուշակորոյս եղաւ :

Անու վանք դիւզի մէջ Մըտրըպ (Քնչուա) թէլին և խօն՝ Աղութ անուն այրի կնոջ մը հաւերը գողցած ատեն , Մանսւկեան Մխիթարը կը տեսնէ , և Մըտրպները ծեծելով հաւերը կ'առնէ , նոյն միջնցին Պօղոսը քիչ մը հեռու՝ դիմիով զուարճացած , ծառի մը տակ քանի Հըսէն կը խաղցնէր . խանալուն պէս , կը կանչէ զՄխիթարն այնչափ կը ծեծէ , որով երկար ժամանակ հիւանդութիւն քաշեց , և մեռաւ :

Տըլաշէնցիք զիւելարայի հանած էր . հնձօղնեռու կերակուրն ալ Ասմականցւոցմէ կը պահանջուէր . նոյն գեղի քահանացի եղբայր կարապետը այս բռնութեան չ'անսաց , սաստիկ ծեծուեցաւ , եղբայրը Ցէր Յարդուղիմէսս միջնորդէլ ուղելով՝ Պօղոս անոր ալ զարնելով՝ ձեռքը կսորեց :

Ամենաշատայ Եղիաղարեան Սարդիսը Պօղոսի փոքրաւորի եղբայր Աւետիսի հետ . կը կոռին . Աւետիս Պօղոսի անունով կ'սպառնայ Սարդսին , Սարդիս ալ կըսէ՝ «ձեր փեսայ Պօղոս վ . ո՞վ կըսպառնաս ինձ» . Պօղոսը զայս լուսվ զՄարդիս կը բանտարկէ , և քիչ մը յետոյ սաստիկ զինովցած՝ այն կատաղութեամբ կը ծեծէ զՄարդիս , որ արիւն

լուայ կը դառնայ : Այս անադորոյն կատաղութեան Անապատի միաբանութիւնն ալ չ'կրնալով հանդուրժել բողոք կը բառնայ Պօղոսի դէմ :

Վան քաղաքիս Ս. Նշան Եկեղեցւոյ —ուր Առաջնորդարանն է — Ցէր Սամուել քահանացայն դիւշեր մը Եկեղեցույ մէջ իր շրջանին օրերը գնացած ատեն , Պօղոսը իր զուարճութեան համար այլանդակ փաթթուցներով փաթթուած և զարհուրելի կերպարանք մը առած կը մօտիկնայ Ցէր Սամուելի անկողնոյն , որոյ մօտ կանթեղ մը կը վառուէր , և այնպէս զարհուրելի ձայնով մը կը պօռայ ու վըրան կիյնայ , որ Ցէրտէրը երկիւղէն կը կարկամի : Անգամ մ'ալ Եկեղեցին դրուած մեռելը կը բերէ Ցէր Սամուելի անկողնոյն մէջ կը պառկեցնէ . որմէ նոյնպէս կը սարսափի քահանացն : Ասոնցմով Պօղոսը կը զուարճանսց բայց Ցէր Սամուելը կընդարմանայ , կը հիւանդանայ , կը մաշի և կը մեռնի : Ասոր Երէցկինը ժամանակին բողոքած է Պատրիարքանը , և այժմ կը լսուի որ Պօլիս եկած է :

Պօղոսը կառավարութեան կողմանէ կամուրջներու շինութեանց տեսուչ էր , գործաւորները ձրի աշխատեցնել տալէն զինի , չեկողներէն բարբարոսութեամբ ժողված ստակները կերած է , և օրականով բանող գործաւորաց վարձքերը անվընար թողած է : Իւր այս պաշտօնավարութեան միջոցին գեղերու մէջ արջելով բազմութեամբ , խորտիկներու համար հառ , ոչխար , գինի , ձիերուն գարի , ձրի . և անխիլ . մնխունք ու զրկանք ըրած է :

Պօղոսը Սքանչելաղ ործայ վանահայլութիւնը

Դրիգոր մ. էն առնելով՝ իր մտերիմ և գործակից  
Բարիթողիմէսս վ. ին տուաւ Հակառակ թէ մոյց-  
ւոց բազմանաց ու բազաքներուն . վանքի անա-  
սունները և հասցիթները սեպհականնեցին կերան  
Պօղոսն ու Բարիթողիմէսսն, և երբ Ռէխս Սրդէն  
բողոքեց այս աւերմանց դէմ, Առաջնորդարանի  
մէջ երկու ամիս բանաարկուեցաւ Պօղոսէն : Այս  
Բարիթողիմէսսը յետոյ հոգւոց վանքը վանահացը  
եղաւ . նոյնպէս վարուեցաւ հոն ալ, կերաւ Պօ-  
ղոսին հետ , պաշտպանուեցաւ անկէ :

Պօղոսէն՝ զօրաց ֆէրիկ բաշան հայ կին մը կու-  
ղէ, նոյն միջոցին ջհեցի Պետրոսը իր կնոջ ծեծած  
կրաց երիկուն մը . Պօղոս կիմանաց և կինը բերել  
տալով կը դրկէ փաշային . կինը գեղեցիկ էր և  
կայտառ . Պետրոսը ուր կը զարնուի , չ'կը բնար կի-  
նը դարձնել . մինչեւ բանտ կը դրուի Պետրոսը . և  
երբ բանտէն կենէ, Պօղոս կուգայ , Պատրիարքա-  
ւանը կը դիմէ այս խնդրով :

Պօղոսին կը դիմէ ձանիկ գիւղէն հայ մը ու կը-  
սէ, «Թօփուղեան Սրբազնը կ'արգիլէ զիս այնինցին  
հետ ամուսնանալ չ'հասութեան համար, և մեր նշան  
չօրհններ» : Պօղոս հնարք կը ցուցնէ ըսելով . « դու  
դնա այն կոյսը պղծէ , ու չ'հասութիւն չին հար-  
ցրներ . քեզ կուտան» . և տղան այնպէս կընէ : Թօ-  
փուղեան Սրբազնը աւելի զայրացած պատճել  
տալ կուզէ տղան և նորէն կ'արգիլէ նշանտուքը ,  
Պօղոսն ինքնին կերթայ կը պսակէ . երբ թէ աղ-  
դին խոյտառակութիւնը կը ծածկէ . և ըլլայ կրօ-  
նափոխութեան դիմեն :

Պօղոսը Մարմետ դիւղի Մարտիկեան Աւետիսի

անձնասպանութեան պատճառաւ արգելք կը դնէ  
բոլորին որ անձնասպանի տան ու ընտանեաց հետ  
յարաքերութիւն չընեն , բատ կանոնի Սուրբ Եկե-  
ղեցւոյ . . . դուռը վրանին կը փակուի , և խեղճ  
ընտանեաց հացը երգիքէն կը կախեն . մեղսա-  
քաւութեան համար հազար զրչ տուգանք կը գնէ  
վրանին , և մինչեւ չ'վճարեն չեն արձակուիր . եր-  
կու ամիս այսոպէս կը շարունակուի : Խեղճերը վեր-  
ջապէս ճարահատեալ իրենց միմիսցն ստացուածք  
մնացած երկու գոմէշ ծախելու կը դրկեն , որ մեղ-  
սաքաւութիւնը վճարեն : Իդնատիս Սրբազն  
կ'իմանայ , ժուղթ կը գրէ Պօղոսին , կը յանդիմո-  
նէ . և հրաման կընէ քահանայի մը երթալ այն ըն-  
տանիքը միմիթարել :

Տաղվէրանցի Ոէխս երանոս գործով մը Մշոյ  
կողմը դնալով , և ի դարձնն Խլաթու Ղաղար Վ. ի  
միջոցաւ կը պսակուի . ամուսնոյն հետ դիւղը դար-  
ձած ժամանակ Սրբազնելադր Վանահայր Բարդ .  
Վ. վրայ կը համնի . « վայ , դու իմ թէ մնես , Ղա-  
ղար Վ. էն ինչո՞ւ կարգուիս . հիմա հինդ ուկի պի-  
տի տաս , չէնէ զքեզ Պօղոս Վ. ին կը դրկեմ» , կըսէ :  
Մարդ չ'տար ուկիներ . քանի մ'օրէն ութի չափ  
զապթիէ յով Պօղոսի հրամանաւ Թալալեան Գէոր-  
գը կուգայ՝ և գիշերանց Երանոսն ու իր կինը կը  
բռնեն կը տանին վան Առաջնորդարան : Պօղոս  
« անվաւեր » կը վճռէ պսակը . էրիկը չարաչար  
անջանոք բանտը կը գնէ . իսկ երիտասարդ կի-  
նը քանի մը գիշերները . . . վերջը կը լորկէ Ս. Դրի-  
գորի վանքը Եղեշէ վարդապետին . . . (Եղիշէն իր  
գործակիցներէն մէկնէ) , կինը այս շարութեանց

չտանելով՝ յայանապէս կը պօռայ « և իմ էրիկս կուղեմ. վարդապետներ չեմ ուղեր » . . . վերջապէս Պօղոսը խեղճ Երանոսէն 25 ոսկի ալ տուդանք կառնէ :

Գոմս գեղէն մարդուն մէկը կուղէ իր գրկած սանուհին իրեն կին առնել, Պօղոսին կը դիմէ. « օրէնք չներէր » կըսէ. « բայց երբ առնես փախացնես Մալաքասըմ Տաճկաց գիւղը, որպէս թէ Տաճիկ կըլլաս, այն ժամանակ մարդ կը խրկեմ կը բերեմ և կարդել կուտամ » :

Տիրամայր գիւղէն եօթանասուն ամեռայ մարդ մը, շուշանայ ծեր մը. 10 լիրա կուտայ Պօղոսին. որ Նորշէն գիւղացի քսանամեայ հարս մը իրեն կին ընէ. հարսը ապատանած էր Լիմ Անապատի դրսի տունը, ուր կոխել տալով Պօղոսը գիշերանց 15 և չափ Քիւրտերով և Տաճիկներով, կը բռնէ հարսը կուտայ վերցյիշեալ մարդուն :

Յիշէնք թէղէկիւլեան չնացող Տէր Մանուէլի գէպքերը, ու անոր բրած պաշտպանութիւնը, Արարուց չնացող Տէր Պետրոսի պարագաները, աքսորուիլը, և աքսորէն ետ բերելուն 20 ոսկիի հաշիւը, թէլլալեան գէորդին՝ արտի մը նէ: նէն առնելը, Արտամետցի կինը : Համբաւեալն Էօրտօն : Սէիս Յովսէփի կինը, և ն. և ն. և ասոնց հետ յայտնի համբաւուած գէշյարաքերութիւնները :

Վանայ Առաջնորդ գերապատիւ Տէր Պօղոս՝ Վ. քաղաքական կառավարութեան օրան մէջ Շեխենց Հէյտարի մօրուքէն բռնած կը խաղցնէր, նա ալ փոխագարձաբար ասոր . . . բայց անոր բռնածը մօրուք չէր . . . և այսպէս

քահքանի դաւեշտ մը կը ներկայանար բազմութեան առջւ :

Նորին գերապատութիւնը՝ թէմալի վաշայի աներձագ Արփի պէջին հետ էրբու կատակ ուր որ պատահէին, իրարու շալակ կը ցաթկէին ևն. ևն ևն :

Նորին Սրբութիւնը՝ թէմիր օղլուց հետ բաղնիք գնալով իր գլուխը ճերմակեղչն մը կը փաթթէ, և « ահա Յաճկցայ եռ » կըսէ, և իր դլասրին ալ եազուալ է Փէնտիփին դլուխն անցնելով « էյ, քէշիշ օլտուն ոէն » կըսէ :

Պօղոսի բարեկամութիւնը վայելնդ Հէյտարանցի քիւրտերը Խժիշի գիւղի եկեղեցին կը կողագոեն. Պօղոսին կը դիմէ գիւղացին, Պօղոսը կենէ Հէյտարանցւոց Ալի աղային տունը երթալու . . . ոս իւր « հայր » անուանած Ալի աղանէ . . . որպէս զի անոր Ճեռքով գողօնը հանել տոց . բայց դեռ Ալի աղայի տունը չհասած, գուշակութիւն մը կուգայ վրան, ամայի տեղ մը հողը փորել տալով, գողցուածներէն ժամանարի վակաս և հողաթափը կը դանէ : Եւ Ալի աղայի տունը հասնելով՝ իւր թէ Ալի աղայի հարսին բաճկոն կը գիտէ կը ճանչնայ որ Խժիշի եկեղեցւոց վարագուրի կտորնէ : Խժիշիցւոց կը հրամացէ որ 6000 զուրուշ մէջերնին ժողովնեան Ալի աղային, որ իրենց եւ կեղեցւոց կողովուաը գարնիէ : Այս գումարը կը վճարուի, մի միայն բածկոն մը ետ կուգայ : Բայց այս և այն կողմը կը տարածացնուի թէ « քաջն Պօղոս », Ալի աղայի հարսի վրայէն կըցէր է բաճկոն հանել տալ և դարձնել :

Ալու Պուռնազեան ոէիս Պօղոսն՝ Պօղոս Վ. ի

ամենահաւատարիմ՝ բարեկամն էր յառաջ . և ո՞ւ իդնատիոս Սրբազնը վանտելուն և Առաջնորդարանը պաշտպանուն Պօղոսեան դիւցազներէն մինն էր . պատճառաւ մը այս երկու Պօղոսներ իրարու հետ կը գտան . նոյն գիշերը վարդապետ Պօղոսի քրդերը՝ ու էիս Պօղոսի եղները տունէն կ'զար-նեն տանին :

Այս Անապատի վանահայր Թօփուզեան Սրբա-զանը Պօղոսին հետ կը գտան , երեք օր ետքը Ամայ Առուելու գիւղի ջաղացպանը կը կապուի գո-ղերէն , ջաղացի ցորենները կը թալնուին . և նոյն Անապատի խոտի թէ զը կը վառուի . կ'իմացուի յե-տոյ որ ասոնք ընողը Առնիսու Թամօյի կազախ անունով քիւրտն էր , Պօղոս Վ . ի անձնանուէրն ու հաւատարիմն : Բայց երկիւղէն կը ըւեն :

Սաթմանց գիւղի եկեղեցին սրբապղծել առուղ քիւրտ Մէջմէտ Ալին աղատելու համար՝ Պօղոս Վ . կառավարութեան ատենի մէջ կը վկայէ թէ՝ ոճ-րագործը 12 տարու տղայ մը ըլլալով , բատ օրինի պատիմէ աղատ է : Մինչդեռ շատերը , որոց հետ նաեւ Փիրզալէմեան զեւոնդ Վ . կը վկացեն թէ՝ ոճրագործ չափահաս էր , և մօրուք ունէր :

Եկմալայ Մանուկի ոչխարները կը տանին քըր-դերը , Մանուկը կերթայ Հէյտարանցւոց մէջ , Պօղոսի հօր կողմերը , իր ոչխարները կը գտնայ , կը գտանայ կը գիմէ Պօղոսին , Պօղոս քիւրտերը բերել կուտայ , ետեւէն ալ երկու ձի ընծայ կու-դայ Պօղոսին , և քիւրտեր կ'աղատուին . կերթան կուտեն Մանուկի ոչխարները :

Վերը յիշուած Թամօյի կազախ անուն ամենա-

կատաղի քիւրտը , Պօղոսին հաւատարիմն , ըստ թոյլատուութեան Պօղոսին՝ Անապատայ ճերմակ ձի մը կը գողնայ . այդ ձինը կարժէր 200 դուրուշ . Պօղոս զիազախ կը կանչէ և կ'ապսպրէ որ ձինը գտնայ , կը գտնայ . . . և Պօղոս Անապատէն 2000 զուրուշ կուտայ կազախին , ու կըսէ « հաղար զու-րուշ գտնելուդ համար , հաղար դուրուշը Դնե-լուդ համար » :

Իոնայ աղան Շէրիֆը ճանապարհի մէջ խա-ւենցի Հայ կնիկ մը բռնաբարեց , բայց Պօղոս զՇէ-րիֆ պաշտպանելով սպատիմէ աղատեց , վասն զի իր մտերիմն էր :

Սորբաթ գիւղը նատող ամենասրիկայ Ապտու-լահին վրայ՝ գեղի Հայերը բողոքեցին կառավա-րութեան , և առաջարկեցին կամ զիրենք հանէ այն գեղէն կամ Ապտուլահն : կառավարութիւնը որոշեց Ապտուլահն գեղէն ենէ . բայց Պօղոսը պահպանեց , վասն զի իր ամենասիրելին էր :

Տփիսիէն երկու անապատաց յատկացեալ կտա-կի մը հաշոյ առթիւ՝ երկու վանահարց Թօփուղի և Պօղոսի մէջ անհամաձայնութիւն մը կը ծագի . քանի մօր ետքը Լիմ Անապատի մարադը կը վառուի . թեղէտ իմացան որ Պօղոսի հաւատա-րիմ քիւրտն էր վառողը , բայց երկիւղ կը եցին յայտնելու , որով 30000 զրչի վնաս եղաւ վանքին :

Դըղճայ գիւղէն Հէյտարանցի քրդերը 30 եղ տարան հայերէն , Հայք անզէն յիշեալներուն հե-տամուտ ըլլալով զհայերը կը կապեն , և Պօղոսին բարեկ կը զրկեն ըսելով , « տակաւին մեր տուած ուկիներուն փոխարէնը չլցաւ » :

Պաղանցի Այնէմի աղայ Մանուկին 14 եղ դողցաւ քիւրդ Տրպաղ. գիւղացին կառավարութեան բողոքց . քիւրտը կառավարութեան առջև խօսք տուաւ վերադարձնելու . յետոյ Պօղոսին ապաստանեցաւ , Պօղոս զշայն տփելրդ վոնտեց բաելով . « Տրպաղ աղան քո գողը չէ , հայտէ դուրս » , և ոյսակէս քիւրտն արդարացաւ , Մանուկի եղները անցյացաւ :

Վանայ գումբանեաներ , որ հայ և տաճիկ ընկերներէ կը կազմուի , իրենց անխիղճ շահերը յաջողցնելու համար , Պօղոս գործիք կը շինեն ի մաս հասարակութեան . ինչպէս Շ. գումբանեան Աղբակ դաւառի ասասնորդական տուրքի միւլթէ զիմնւթինք կը դնեն . աեղական կառավարութիւնը կորոչէ որ ամեն մէկ բարդ խոտի աեղ 60 աշ տոյ գիւղացին . միւլթէ զիմները այս որոշումը չընդունելով բարդ մը խոտի աեղ 160 զրշ կը պահանջեն . Աղբակու գայմադամն՝ — իր արդարասիրութեամբ հռչակեալ այն Զէրքէզն էր , որ նախորդ ձմեռա Ալաշկերտու թօփրազդալէի մէջ տէրութեան օրինաց և քրիստոնէից իրաւանց պաշտպան ըլլալուն սպաննուեցաւ արիարար Մէհմէտ պէյի տղաքներէն — Այս գայմադամը միւլթէ զիմներու անիրաւութեան գէմ կը դնէ , և Շ. գումբանեան գայմադամի հետ կը թշնամանց , բնկերութիւն ամբողջ Պօղոսին կը դիմէ , և Պօղոսը խնդրոյն աղդացին կերպարանք տալով , զանազան բողոքներ կը յարուցանէ գայմադամին վրայ , վերջապէս կը յաջողին այնպիսի արդարասէր և ժողովրդասէր կառավարիչ մը պաշտօնէն ձգել , որ

պէս զի աղատ իրենց շահը շահին շահամէրները : Այս դումբանեան է միշտ և ցայսօր Պօղոսին պաշտպան կանգնողը , որոյ մէջն են Պանիրեանն , Մարտութեանն , և լն : Ասոնք էին նոյնպէս որ Միւնիխ փաշոյի պէս լուսաւորեալ , բարեմիտ , ժողովրդասէր և արդարասէր միւթասարիֆ մը պաշտօնանկ ընել տուին Պօղոսի ճարպիկ զրպարտութիւններով , դաւառներէն գեղերէն ահագին հարստահարութեանց ցանկ մը և բաղմասարադիր հանրագրութիւն մը կազմել տալով , իբր թէ ատոնք ամէն Միւնիխ փաշոյի օրով և անոր թուլութեանէն յառաջ եկած էր . այն ինչ իմաստուն կառավարիչը բոլոր հարստահարութեանց աղքիւրները հետազոտելով գտած էր խկապէս որ այդ աղքիւրներուն ակը քաղքի մէջն է , այն է այդ գումբանեան և Պօղոսն , որոնք կառավարութեան շուռը նստելով կը շարժեն գաւառները , կը խարեն կառավարիչը , կը պաշտպաննեն գէշերը , և լն : Միւնիխ փաշան ալ վերջապէս պաշտօնէ ձգուեցաւ , և Մարտութեանն 40 լիրայի արժէքով պատուական մաշտակ մը բերել տաւաւ կարինէն և հագուց Պօղոսին ի վարձ այնքան աշխատութեան :

Պօղոսի « հայր » քիւրտ Ալի աղայի տղան կուզէր հօր տեղը միւտիր ըլլալ : Այս բանը յաջողցը նելու համար Պօղոսին կը գիմէ : Նա կը հնարէ յաջողել եթէ հարիւր լիրաց տայ իրեն : Խեղճ կուտն 50 լիրան կուտաց , 50 լիրային ալ մաւրհակ մը կուտաց Պօղոսին ձեռքը : Դաւ կը գործէ Պօղոսը , ու տուած լիրաներ և մաւրհակ կառավարութեան կը տանի , տուողը կը բանտարիէ կառավարութիւնը .

և Պօղսո Ալի ազային աւետիս կը զրկէ , թէ՝ քո ապստամբ տղան այսպէս խարեցի ընկճեցի : Մեղ փոյթ չէ թէ Ալի աղան ինչ փոխարիներ է Պօղոսին . այլ մեր ըսելիքն այն է որ , Ալի աղայի տը դայի կողմը եղող քրդերը այս բանին վրայ սկսան Հայոց գեղերէն վրէժ հանել չարաչար , և կսկսին տուաջին անդամ Սեղջայ դարին մօտ զարնել թալնել երթեւեկները , հնձողները , և որոց որ կը հանդիպին նոյնողէս . շատ մը գեղերու տաւարն ու ոչխարը տարան . միանդամնյն և Պօղսի մշակաց ձեռքէն ալ երկու ձի իրեցին ու յետոյ ձիերու պոչերը կտրելով ետ խրկեցին : Ահա ո՛վ ինչ կընէ , վսառ գեղացին կը կրէ :

Շատափացի ամենահոչակաւոր ոճզագործը աշխարհաւեր աւազակ Գիւլ Մէհմէտը , որոյ համար՝ Հայ մը մորթել հաւ մը մորթելէ , ոճիրի մը համար կառավարութեան խուզարկութենէ կը փախչի Փարակասանը . այն տեղն ալ աղնուական մը սպանելուն համար կը վերափախչի Վան կուգայ և ուղղակի Պօղոս Վ . ին կը գիմէ , նա ալ կառավարութեան կը միջնորդէ և աղատ կը թողուի , որ այսօր Շատախու մէջ Հայու արին կը ծծէ , որբութիւնները կը պղծէ . և իւրաքանչիւր Հայու տունէն տարեկան հարկ կը ժողվէ մէկ մէկ ոչխար , մէկ մէկ վար իւղ , հաց , պանիր , դրեխ , խոտ , փայտ , դրամին :

Պօղս Վ . ին քրդերու վայրենութեանց գործակցութիւնը , և անոնցմով ասոր ու անոր ըրած սպանակիքները ապացուցանելու հաղարաւոր օրինակներէն մինն է նաև որ Այազենց տունը կոչուն-

քի մը օր թէրզիակաշեանց Եղիազար աղայի վրայ աչքերը կատաղաբար դարձնելով ըստ , « գիտե՞ս , ինձ ո՞րքան շուներ կան . որոցմով քեզ կտոր կը տոր ընել կուտամբ » : Եղիազար աղան ասոր ընդդիմադիր խումբէն է : Ներկայ էր այս խօսքին Պօղոսի բարեկամ Մեծ . կոսպարեան Մ . Վարդան աղան , որ զղուելով այս կոշտութենէն՝ ելաւ քաւեց :

Եյիպիսան պէկ անունով քիւրդ մը՝ խան Մահմուտի աղան՝ որ Պօղոսի որդեգիրն է , օր մը կուգայ Առաջնորդարան և կը յայտնէ Պօղոսին թէ՝ տուանց խաւուրմացի մնացած է : Թէպէտ շինական քահանայ մը հոն ներկայ կը գանուելը , բայց Պօղոս զայն առ ոչինչ համարելով՝ խորհուրդ կը տայ քիւրտին՝ Մանտան կամ Տաղվէրան գեղերէն խաւուրմացու ոչխար յափշտակել : Քիւրտ կերթայ , և ոչխար կը յափշտակէ . բայց վերջը Պօղոսի քաջութեամբ 36 հատը գեղացւոց կը գարձուի , 12 հատը հալալ խաւուրմացու շնորհելով Եյիպիսան պէյին :

Վահանայ մէջ անխոհեմ և տղոյայամիտ ոմանք ընկերութիւն մը կաղմեցին գաղտնի « մուտ և տես » , կտմ « մուտթիւն և փրկութիւն » անունով , որոյ մէջ մտնել ուզողը սարսափելի երդման և անիծից ենթակայ կը դնէին՝ դաղանիքը ըըյայտնելու համար . տպա անդամ կընդունէին . կանոն ունէին , բաժին ունէին . պայմաններ կ'ստորագրէն ին կամ կը կնքէին . որոյ նպատակը ըստ կրօնի և ըստ քաղաքականութեան խխտ վտանգաւոր էր : Քանիները յանձն առին մէջը մտնել , հասկնալ

մինչեւ անդամ՝ պայմանագրութեանց օրինակներն  
ալ ձեռք բերին, որ եթէ վարչաթիւնը ուղիւ տեսա-  
նալ, կրնանք ցոյց տալ Արդ սոյն ազդավանա շար-  
ժումը խափանելու համար, որչափ որ խելահանե-  
րէն ազդարարութիւն եղաւ Պօղոսին, իրբեւ Ա-  
ռաջնորդի, բնաւ կարեւորութիւն չը տուաւ . և  
այսպէս ազդէն կեանքը վտանգող ձախող ձեռ-  
նարկութեան մը եթէ ոչ յայտնատղէս, գէթ լոել-  
եայն կամակից գանուեցաւ : Այսօր զինքը պաշտ-  
պանողներէն ոմանք սյդ ընկերութեան ծաղկէ-  
ներէն են :

Կը վերջացնեմք սյս ցանկը, զոր խիստ համա-  
ռօտեցինք . և ննչպէս կ'երեւի շատ պակաս մա-  
սեր ունի, զարօդինակ, Պօղոս և . ի պակասութիւն-  
ները եկեղեցական պարաւորութեանց մէջ . պա-  
կասութիւններ՝ Ազգ . ժողովոց նախագահներն և  
ինչպէս վարչելուն մէջ, ևն . ևն : թէպէտ վերց-  
դրեալ յանցանքներէն յայտնի կը տեսնուի որ անու-  
նով, տեղով դրսուած ըլլալով . ամէն մեկ դատա-  
խաղը կրնայ ներկայանալ և իր դատար վարել, ա-  
նոնցմէ որոնք Պօղոս կը դանուին, պատարաստ են .  
և որոնք երկիրն են, կրնայ պաշտօնատղէս հար-  
ցուիլ : Մէնք բոլորոցներս ալ որքան գիտենք,  
կրնանք հաստատել . և կուղենք սյս տեղ հետե-  
ւաբար կարդել քանի մը նամակներու պատճեն-  
ները, որոց պարունակութիւնը տպացոց են մեր  
ըսածներուն :

Ղ.

ՆԱՅԱԿ Ա.

Վեծ . Ազդառէր Ազնիւ բարեկամու .

Ասկէց յառաջ զրեցինք ձեր վեհանձնութեան թէ  
Ազթամարաց միաբանութիւնն եւ թէմականներ չեն ըն-  
դուներ զՊօղոս Վ., որ կաթուղիկոսական տեղապահ Բլ-  
լայ Ազթամարաց Սթափին, ասոր համար բոլորն ալ սուրբ  
Տաճառին դուռը գացեր ամէնքն ալ Վան եւ ասդին ան-  
դին ցրուցան, եւ նախախու, Մոկաց, Խորանու, և  
տրիչ հռուտոր եւ մերձակայ գաւառներէն հետդհնուէ  
մազմաթեաններ կը շինեն կը խրկին, կը բոլորին Պօղոս  
վարդապետն համար, եւ կրօնափոխութեան սպառնա-  
թիքներ կուտան մեզի, եւ ինչպէս մեզ կը պրեն, կու-  
սակալին ալ այսպէս կը գրեն . մինչեւ անդամ զմեզ կը  
կանչէ կը պատուիրէ թէ զդուշութեամբ գործ տեսէք,  
չըլլայ թէ ազդերնիր կրօնափոխ ընկերով խոսվաթիւն  
յարուցաններ երկրին մէջ :

Ամեն . Արբազան Պատրիարք Հօր գրեր եմ զատնաք .  
բայց պատճառն պաշտօնական կերպիւ չը Փատաճացայ  
գրել, չըլլայ թէ Քննութեան ասկ ասնուի եւ երկիրս  
որ Փոքր Բնչ խաղաղութիւն կարիք, նորէն կուսակցու-  
թիւն եւ խամալութիւն յարուցանուին, բայց բոլորովին  
լուելով ալ գուցէ նոր կամբածներու ասիթ ԲՀամ . ա-  
սոր համար հարկ համարեցայ փոքր ՚ի շատէ սրասկից  
բարեկամնի գրելու, չէ թէ պաշտօնական կերպիւ, այլ  
զաղսնի եւ խոստովանաբար՝ եթէ Ամեն, սրբազան Պատ-  
րիարք Հօր, կամ մէկ երկու ձեր սրբակից բարեկամնե-  
րուն կարդալ տաք վեսա չունի : Պօղոս Վ., արդէն յայտ-  
նի է, թէ անհնարին « բարկացօղ, խոսվարար, կրօնա-  
տեաց, եւ մոլեզին » մէկն է, կուզաց քաղաք, շատ ան-  
դամ « այլազգեաց տուններ », կը կհնայ, « պահք կը լու-

ծէ, կնիկ կը խաղյնէ, ոսկի կը պագցնէ և անսնց ճակառը « կը համբուրէ » եւայն, իրեն Անապատի միաբանութէն 26 ամեայ Ռափայէլ անուն երիտասարդ վարդապետն, անցած տարի այնքան ծեծեց, որ « կողերու ոսկորներ փշեց » կիսամեռ բեռին ձգեցին մեր վրայ, որ ժամանակ մը սուրբ Գրիգորի վանքը շահեցինք, յետ այսորիկ բերի քաղաք Սենէմ անուն այրի կնոջ առւն տարի, եւ բժիշկ Կարդեցի վրան որ չորս ամսէն աւելի դարձնեց, հուսկ յետոյ ճար չեղաւ վախճանեցաւ անցածներ՝ չարաչար անիծելով զապանողն իւր, որուն շատ անգամ Խաչատուր անվաւեր կաթողիկոսը եւ միաբաններ այցելութեան երթալով ականատես եղան։ Մարմառու Տէր Կարապետա քահանան « հարուստի տակ մեռոյց », Կոտոց Անապատի բաղմամեայ լուսարար Գրիգոր վարդապետն քառասուն օր անոր անէն « գերեզմաննոց պառկեցաւ ելաւ »։ Անապատայ բաղմամթեր համբար ցորենոյն « ի վաճառ հանեց, եւ այլազդեաց պարդեւ արւաւ . նմանապէս եւ անասուններն, յոր մէկն ասեմ. դիւղացոց մէօնիւներ ժողվեր քովէ է պահեր, որով յաճախ մազպաթաներ կը շնուրին, եւ Աղքային վարչութեան գլխացաւութիւն կը պատճառեն։ Ասոնց ամենուն կանխածանօթ են Աղթամարաց միաբանութիւն եւ թէ թէմականները, ասոր համար երբոր անուն կուտան, անհնարին յուսահատութեան մէջ կընկզմին։ Ասոնք ըստոյդ եւ անսխալ, եւ աշխարհածանօթ են, բայց մենք խոհեմութեամբ տարանք ամենուն, մանաւանդ մեղի գէմ եղածներուն, զի « զնա շահեցայց » ըստ առաքելոյն։ Այսքան ՚ի Կարճոյ ծանուցեալ, մնամ վասն պատուական կինացդ միշտ աղօթարար,

Լինուարիսո Արքուուիսուանո

՚ի գեկտ. 23. 1864 Վաստուութիւն երէր  
յնպիսկոսարանն Վան քաղաքի».

### ՆԱՄԱԿԻ Բ.

... Հիմայ մեր քաղաք անանկ մէկ բողանոցմէ գարո ձեր որ տեղացդ Ենի շահիր ըսված տեղ մեր քաղաքին նայելով համեստութիւն ունի, ինչու որ առաջնորդներ ուր որ երթալու ըլլան իրենց ընանիներ յետերնին կը տանին, ինչպէս որ Աքանչելադ ործ վանքի հին առաջնորդ Պարսիկ Տիլօնան Բարդողիսոս ըսված վարդապետ երբոր առաջնորդական պաշտօնիւ հոգւոց վանք զնաց մէկ կին եւ երեք հատ տպայ ունէր յետ տարաւ . ալ չեմ զիտեր ասիկայ սուրբ Աւետարանի մէջ ո՞ւր տեղ գրուածի, կամ սահմանադրութեան քանի՛ երրորդ կանոնի հրամանաւն է որ կընեն, տեղացս փոխ առաջնորդ Պօղոս վարդապետն ասոնց դէմ ամեննեւին չի կընայ խօսէ, եթէ որ խօսելու ըլլայ կըսեն ոչ ապաքէն քանի հատ ալ քեզի կայ, անոր համար չի կընայ խօսէ : Ասանկ բաներ գրել շատ մեծ ամօթ բան է, բայց ինչ ընենք մեր երիտասարդներն ալ չեմք կընայ շանէ, եթէ որ խօսելու ըլլամք Միքօրէն մեշնք կը պատասխաննեն ըսկելով թէ, առաջնորդ վարդապետ իշխանք որ կընեն ասոնց համար մեղք չէ մեղի համար մեղք է . Հրէից ազգ պոռնիկ կնոջ համար Գրիստոսի ըստին թէ պէտք է այս կին մեր օրէնքի հրամանաւ քարունեմք, բայց Գրիստոս ըստ թէ ձեր մէջ ով որ անմեղի՝ առաջ քար անիկայ թող գարնէ . կիմա մեր քաղաքին մէջ անանկ անմեղ գատաւոր չկայ, որ ասանկներն մէջ համարձակ կըսէ թէ, չէ դու իմ իրիկն ես, անոր մէջ համարձակ կըսէ թէ, չէ դու իմ իրիկն ես, անոր կընայ գատէջ, ինչպէս որ քանի տարի առաջնորդարանի ունինեակի մէջ Օքոտո ըսուած պոռնիկ կնոջ գատը Վարեցին . Պօղոս վարդապետ յիշեալ կնոջ ըստ գատը Վարեցին . Պօղոս վարդապետ յիշեալ կնոջ ըստ գատը Վարեցին . թէ, աղջիկս զաւակս ինչո՞ւ այդ զէշութիւններ կընես, ամօթ է . յիշեալ կնիկ պատասխանեց թէ, ավար վար-

գապետ առև Աստուածուց չեմ վախենայ ինծի զաւակա  
կան, չէ առ իւրիկնես եւ այն ժողովին մէջ ներկայ  
էին Խաչատուր Կաթողիկոս, քահանաներ եւ ուրիշ մար-  
դիկ որ ականատես են,

Եւ այս Օրուու ըստուած կին չատ աշակերտներ ունի,   
եւ իրեն բնակութեան քաղաքի մէջ ապահով տեղմէ Ա-  
ռաջնորդարանին մօտիկ ըլլալով Պօղոս վարդապետ ասի-  
կայ երբ կրնայ Պօղոս խրկել, թէ որ Խրկելու ըլլայ ոչ  
ապարէն Պօղոսի ամն գործքերուն ապացոյց ըլլայ անոր  
համար չև կրնայ խրկել. աեղոյս հաստրակութիւն առա-  
ջի կոյք յիշարհներու պէս չեն, քիչ չատ մէջնին պի-  
տութիւն ծաւալիք է, եւ քոնի մը տեղ ալ ընկերու-  
թիւններ կան Ընթերցասիրական եւ ուսումնասիրական,  
եւ սոսնց ժողովի մէջ չատ խորհուրդներ կըլլայ, մին-  
չեւ անդամ պատարագին վրայ խորհելով կըսեն թէ ինչ-  
ովէն կըլլայ որ սուրբ Պատարագին մէջ ասսնկ չնացողաց  
անուն կը յիշառականի. եւ ասոր վրայ չատ երկար խօ-  
սակցութիւններ կրնեն, եւ իրենց մէջ երկրաց թիւն մշտ-  
նելով յուսահատութեան տոիթ կըլլայ:

1874 օդոսոս 24

որ ՚ի Վան

Կ. Գ. Պ.

Վանայ Քաղ. ժողովոյ անդամ

### ՆԵՐԱԿ Դ.

Ամէն մէկ խզութիւն մէկ կողմ ձգելով այ-  
սօր գերի եմ եղեր Պօղոս Վ., ի ձեռք, պատճառ իմ պահ-  
ութիւններ, ոչ ոք անիմ, որուն ծանոցանեմ իմ խըլ-

Պօղոս Վ. Տ. Սամուել քահանային անդայելու քա-  
ներ ընկերով վախճանելու պատճառ եղաւ. կը հարցինս  
թէ ինչո՞ւ պատճառ եղաւ. մէկ օր մասել ծոց վրաւ,  
քնացած աեղ ջուր լիցուց վրան, քնացած անդ պիշեր  
այսուղով սոք փաթաթվեցաւ, ինքն ալ վախցաւ.

վախճալուն պատճառն ալ այն է, որ ինչ որ կընէր յան-  
կարծ կընէր. վեց ամիս բերնէն արիւն եկաւ, վեց ամիս  
հիւանդ պառկեցաւ. վերջ Աստուած իմ մեղքո երես  
զարկաւ, քահանայն վախճանեցաւ. եկեղեցիէն ալ իրա-  
ւունք չտուին, երեք հազար զուրուշ պարտք թողաց.   
քանի մը իշխան աղասին ընկերութիւն գրվեցան այն  
պարտք տալու համար, ութ հարիւր զուրուշ տուին.   
մնացած Պօղոս Վ. թող չը տուաւ, պատճառ մէկ պատիկ  
օթեւան մը ունիմ բնակելու, կըսէ թող ծախէ պարտք  
տայ. ևս ալ եթէ ծախէի շատ խեղճ ովասի ըլլայի, ե-  
րեք անդամ Առաջնորդարան դաշի, ներկայ չը հանեցին  
որ իմ ցաւս իրենց յայսնէի. շատ տարակուսանաց մէջ  
մնալով աղերսապիր մը զրեցի որ չըլլայ որ տունս ծա-  
խնես, մինչեւ մէկ երկու տարի վարձով տաս, վարձք  
առնես պարտք տաս. ինքն ալ չեմ խառնուիր՝ պատա-  
խաներ է, պարտատէին ալ այլադրէ է. շտա ժամանակ  
Առաջնորդարան դացիր են չեմ խառնուիր՝ ըսերէ. այ-  
լազգիներն ալ վրաս կը խրկէ, ևս ալ շատ խեղճութեան  
մէջ մեացի, արդէն ֆաշային եւ Ղատիին ընտանեաց կար  
կը կարէի, անով ապրուս կընէի. Էֆէնավիներն ալ կամ-  
չիր Պօղոս Վ., ին ըսեր էին. ինչո՞ւ այս կին խեղճ ևս թո-  
ղոցեր ձեր ազգին քահանայի կինն է. դարձեալ չեմ  
խառնուիր՝ պատասխաներ է. մնոնք ալ ինծի իրենց հա-  
ւառքին հրատիրեցին, որ ինծի տիրութիւն ընէին, հիմա  
ևս անոնց վախուն տունէն եկեր եմ այս կողմ այն կողմ  
անտէր կը պարզուիմ, այլ կարողութիւն չունիմ պարսե-  
լու . . .

1874 սեպտ. 7 ՚ի Վան:

Յ. Երեցին Տ. Առաքել

Վահանայի Անանեան

Հանդացեալ իդնատիս սըրադանին նա-  
մակը, որուն մէջ Պօղոս վարդապետի այդքան  
եղեռներ կսառագրել. և կ. Գ. Պ. ի սոորադրած

նաւմակը, որ Պօղոս վարդապետի անբարոյականին հրապարակական կերպարանքը կը յայտնէ . զարմանալի են և յատուկ ուշագրութեան արժանի, վասն զի երկուքի մէջն ալ Ախթամարայ Ս. Խաչառուր «անվաւեր» կաթողիկոսը վկայ կը կոչեն . բարեբաղդաբար նորին սրբազնութիւնը՝ սյօր ներկայ է, Պօղոս Պատրիարքաբանի մէջ, եթէ Աստուծոց դատաստանը միտք բերէ, անշուշտ ճշմարտութեան վկայութիւն մը կուտայ . բայց դժբաղդաբար նա ևս զՊօղոս վարդապետ պաշտպանելու և վանը զըկելու նպաստաւոր դիրք մը բըռնած ըլլալը կը հաստատեն . թերեւս հետեւելով ներկայ պարագայից, այսինքն բաւական է որ Խրիմեան սրբազնի հակառակորդք տնօրէնութիւն մը բնեն նա համաձայն է անսնց, վասն զի Ն. Սրբազնութիւնը Ն. Սրբազնութեան հակառակորդաց պարագլուխ հանդիսանալու պաշտօն ըստանձնած է, կարծելով թէ Խրիմեանն է պատճառ, որ ինքը չկրնար արդարանալ և իր անարդար աթոռը ժառանգել . կամ թէ՝ ինքն Պօղոս վարդապետին՝ Պօղոս վարդապետն ալ իրեն համար պիտի նպաստէ անշուշտ . Մենք կը խոստանանք միայն առ այժմ . և եթէ հարկ բերէ, Խաչառուր սրբազնի խնդրոյն վրայ ալ տեղեկադիրեր և թղթակցութիւնները զատ տետրակով մը հրատարակենք, մտնաւորապէս Պօղոս վարդապետի դրածը, թէ ի՞նչպէս Պիւլպիւլ Կաթողիկոսին մահուան պատճառը այդ Խաչառուր սրբազնն ըլլալը կը հաստատէ . նոյնպէս և այնպիսի դիրերը՝ որ Խաչառուր սրբազնը՝ զՊօղոս վարդապետ է՝ ամէ

Քառանէ : Ի՞նչ զարմանք, որ այսօր, Խրիմեան խաչել տալու օրը, իրեւ Երուսաղէմի դատաւոր և Գալիեայի թագաւոր եղեն բարեկամք միմեանց: Ասոնք ամէնը ներկայ վարչութեան ուշագրութեան կը յանձնենք, և ազդային պատմութեան, դատաստան բնելու համար: Եւ թէպէտ եղեսեանի համար՝ Խզմիրցւոց պէս, կամ Պատրիարք ձգելու համար Պօղոս Կրօնական ժողովոյ ընելիքին պէս, կրնայինք մենք ալ դիմել ակրող կառավարութեան ատեանը . և զՊօղոս վարդապետ խոպառ մերժել տալ վանէն ինչպէս Շապան 12 սէնէ 89 թուավ Խորիծիէ վանք: Խալիլ փաշայի դիրն ալ կրնան յիշել վարչութիւնը՝ թէ որքան նպաստաւոր պիտի գտնէնք Բ. Դուռը մեր գատին համար . բայց մենք չըրինք, յուստով որ Ազգ . Վարչութիւնն ալ արդարութեան դործադիր պիտի ըլլաց:

Հոս գնենք վանք: Խալիլ փաշայի դրածին օքինակը.

Խրմէնի Պաթրիքրիցինէ

Ռիթողէթլու է գէնարիմ հաղոքթէրի

Հարաբետթը Մէֆոէտէթքեարանէսինէ մէպնի մէպուդ օլան խթիտաի էսըլանէլէրի վեճն իւէ պա Էմիրնամէի սամի Վանասան Պանազըրտա քեային իւչ քիլիսէյէ նաղլ օլունմուշ օլան Պօղոս րահիպին օրատա տախի իգամէթի մահզուրուան սալիմ օլմահեմաղը պէեանըլլաքէնսին ոլ հավալիսէն ուզագնա պիր մահալի թէսիփաի բուզումը պու քէրրէ Երգում վիլաւեթինտէն ինչու ու իշար օրունմը վէ մէրգումը մէ Փոէտէթի պէր վէճի մուհարեր պաթրիքիսանէլը մինձէ տախի միւսատագ պուլունմուշ օլմաղա պէր միւծիսի իշար մէրգումըն նաղլ ու իգամէսի զըմբընտա տիկէր միւնասիալ պիր

մէհալլ թային պույրումասը սիեադրնասա թէղքէրէի սէ-  
նալցրի թէրգիմ գըլընաը :

Քի Կ շապան սէնէ ԱԱ  
Վէ Քի Ծ թըշբինի Էվէլ սէնէ ԱԱ

Թ.

ԴԱՐՁԵԱԼ ՔԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐ

1

'ի Վանտոսալ 1872, մայիս 24.

Ամենապատիւ Սրբազն Հայրիկ .

Թուէս 13 օր յառաջ ձեր Սրբազնութիւն Մահաւեսի  
Գէորգ, եւ Շարան պէյերուն յայտնած էիք որ Պօղոս Վ. ը  
համոզեն իր հրաժարական պատուաւոր կերպով աալու :  
Հաս ձեր հրամանին Մահաւեսի Շարոն պէյ տկարութեան  
պատճառաւ քաղաք չ'կրցաւ երթալ . իսկ Մահաւեսի Գէ-  
որգ պէյ համոզեց զինքն որ հրաժարական տայ՝ եւ նա  
ալ ընդունեց : Սակայն երկրորդ օրը Պանիրեան, Խսաճան-  
եան, Մարութեան անձանց գրումաքը ետ կեցաւ . եւ  
յիշեալ անձինք ապօրինաւոր կերպով ժողով մը գումա-  
րեցին, եւ նախ թէ ինչու համար կանչուելին եւ ոչ  
մէկը գիտնալով գնացին շուկային, եւ ժողովեցան : Կը  
յառաջարկեն ժողովին թէ հանրազիր մը պատրաստենք,  
եւ հեռազրենք Պատրիարք Հօր որ Պօղոսը տեղս պիտի  
մայ, սակայն չորս մասի երրորդ մասը յարգեց Սրբազ-  
նութեանդ որոշումը, եւ չընդունել Պօղոսի տեղս կենալ :  
Որոց դէմ յիշեալ անձինք իրենց պատրաստած քանի մը  
նշանաւոր լիբր անձանց հետ միանալով ըսին . ո'չ Վար-  
չութիւն եւ ո'չ Պատրիարք չենք ընդունիր, մինակ Պօ-  
ղոսը չենք թողուր որ աեղէս հեռանայ : Երբ այս անակա-  
տեհ խօսքեր լսուեցաւ, շուտ մը արդարամէր մարդիկ  
միահամուռ բողոքեցին անոնց դէմ, եւ այսպէս խան  
շփոթներով ժողով ցըռուեցաւ՝ առանց որոշումն տալու :

Ուստի մենք եւս սահմարուեցանք ութն օր յառաջ  
քաղաքական ժողովով հեռադրով մը ծանօւցանել ձեր  
Սրբազնութեան, ինդրելով որ « անմիջապէս հեռագրէք  
կուսակալին որ Պօղոս տեղէս հեռացնէ » եւ անմիջապէս  
դրէք իրեն որ հրաժարուած են . սակայն հեռագրոց պա-  
տասխանին դեռ չ'առնուեցաւ :

Ահա կրկին կը խնդրեմք որ 'ի սէր խաղաղութեան  
անմիջապէս ժամաւ յառաջ « Պօղոս հեռացընէք » սահ-  
մաններէս, որպէս զի գուշակելիք սաստիկ խոռվաթիւն-  
ներ սահնետանան : Աւելորդ կը համարիմք նորա ըրած ե-  
ղեռնագործութիւններ մասնաւոր նշանակել, քանի որ  
զուք ինքնին իսկ գիտէք : Այս խնդրեմք որ ինդիրնիս  
շուտով կատարելու չնորհ ունենաք, որով զմեղ ձեր Հայ-  
ութեան երախտապարտ կը կացուցանէք :

Ստորագրութիւնք  
Բարդ. Հայունա Եօնի անդամոց .

2

Ամենապատիւ Սրբազն Հայր .

Երկու դէմ ընդգէմ կուսակցութեան հրոսակին առ-  
ջեւ ինալով, ութմամեայ ձերունոյս ձեռքի գաւազա-  
նըն հինաբար յափշտակուեցաւ . ( այսինքն ) կամիմ ասել  
խղճմատանայս ազատութիւնը բոնաբարուեցաւ յատենի  
. . . եկեղեցւոյն :

Սրբազն Տէր, ես որ արդէն 'ի պաշտօնէ եւ ըստ  
ձերութեան հասակի մեռեալ եմ յաշխարհի, եւ աղքային  
կամ քաղաքական գործոց միջամտութիւնը քա՛ւ յինէն,  
այս օրերս Պօղոսեանք, 'ինպատու Պօղոս վարդապետին  
հանրազրին ստորագրութիւնը եւ կնիք խնդրեցին յինէն,  
եւ առին, եւ առման եղանակ յայսնի . . . :

Ուստի սահմարել յարդարութենէ եւ 'ի խղճէ մտաց,  
բողոքելով ընդգէմնորա, յանդորրութիւն խղճի, եւ իրնոդ-

Ինչմ զներողութիւն իսր առ այր անկարող, անկած և  
դառամնալ.

1872 յունի 28

՚ի Վան.

Մնամ ամենախոնար ծառայ  
• • • . +ահանայ.

3

Ամենապատիւ Սրբազնն . . . Հայր եւ ազգառէր  
Ատենակալ Տեարք Ազգ. Վարչութեան .

Ի լրոյ կիմացուփ թէ, Պօղոսեան կուսակիցք քաղաքէս ՚ի գիւղ շրջելով զանազն միջոցներով հանրագիր մը կը պատրաստեն Զեր Ազգասիրութեան մատուցանելու, Պօղոս վարդապետին կրկին պաշտօն խնդրել՝ փրտած ուկարի մը կենդանութեան չունչ մաղթելու պէս, որուն՝ ՚ի յարութեան յետնում ծառացից հաւատալի կը թուի, յետ իւր այսչափ չարութեան, եւ անքաղաքականութիւնը վտանգելէն զինի: Տեարք, արդէն այս կրկրին ի՞նչ ըլլալ դուք գիտէք, որոյ համար ժողովրդեան ողջախոն մասի կողմէն հանրապետութիւն մը պատրաստեալ նոյն փոմթայով առ ձեզ ուղղեցաւ, նմանապէս մասնաւոր նամակաւ մասնաւոր աեղեկութիւնները, ՚ի սէր ազգութեան ալո անօրէն մեր սահմանէն վարելու փոյթ ՚ի գործ դրէք, յիշեալ կուսակցութիւնը Արժ. Գարեզին վարդապետի վրայ առ նախանձու զրպարատութիւնները բարդած են նոյն հանրագրին մէջ. սակայն առանց չափազանցութեան կրնամք ըսկէ թէ Նորին արժանապատուութիւնը ոչ մի այն սահմանադրութեան օրինաւոր գործադրիչ, այլ եւ այս խռովսթեանց ժամանակ իբրեւ խաղաղութեան հրարեշտակ մը հանգիսացաւ, այն ինչ հակառակորդաց կողմէն թէ քուէարկութեան ժամանակ ՚ի գործ դրած խարդախութիւններու համար ժաղավուրդ կը գրգռուէր յարձակում ըսկէ՝ յետ այնորիկ Պօղոս եւ Պօղոսեանը այն

ինչ սրբազնն Պ. Հօր եւ վարչութեան վատ եւ նուառուացուցիչ խօսքեր կը կրկնէն եւ ողջախոն մասը դարձեալ զրդուեցաւ եւ առանց օրինաւորութեան վրէժմինադրութիւններ պիտի ընէր. դարձեալ նոյն Գարեգին վարդապետի ազգութեան յորդորներ մեղմացուցին զիրենք, եւ այսպէս միշտ խոհեմութեամբ իւր պաշտօն շարունակեց, որ անհնարին էր ուրիշ ո եւ իցէ մէկուն այսպէս յաջող պաշտօնատարութիւն . . . :

Տեարք, Սրբազնն Պատրիարքի եւ Վարչութեան գէմ հայնութեամբ եւ ապատամբ շարժումներով անհաւատարիմ գանուող մէկը՝ առ ո՞ ոք ՚ի պաշտօնէցն արդար գտանիցի:

1872 յունի 3

՚ի Վան.

Սուրբագրութիւն  
13 անշնչ պատրուսութիւն .

4

Ամեն. Ս. Հայրիկ եւ Ազգ. Կեդր. Վարչութեան  
Մհծամամ Տեարք .

. . . Վասպուրականը իր յառաջդիմութեան թշնամունի անկանութեամբ ծախաճարութեամբ տօնեց, այն կարծեցիւալ ահ ու գողը եւ քաղաքական մնծ մեծ հեռատեսութիւնք որ զինքը կաշկանդած էին, յաջող յեղափոխութեամբ մը խալուկի նշմարեց, իրողութիւնք առանց առանցքէն խռովելու զեղեցիկ շրջանի մէջ են, փրփառ զէզ ալիքներ ժայռելու զարնուածի պէս ետ ետ կերթան եւ իրենց յանդզնութեան անդունդներու ներքեւ կը քաւեն, մթազին ամպերն ՚ի ցրիւ եւ խաղաղութեան ծիածան աղօտ վայլելու վրայ է, օրեր տնօյսն, այն ինչ անհանգիսա կործանովին յուզարկաւորութեան կազմաէինք, որպէս զի մէնք ՚ի խաղաղութիւն եւ խաղաղութիւն ՚ի մող անդրադանար, հեռագիր հնուադրի վրաց խնդիր խնդիրի վրաց, դարձեալ ձեր ներողամասութիւնը՝ մեր

մեծամեծ ակնկալութեանց պատուար՝ եւ կործանուովին վերականգնան սատար կը լինի, մէկ խօսքով Հայրիկ ձեր ներողամութիւն կործած առաքինութիւննիդ, Վանի մէջ մեղք կը թարգմանուի, թշնամյն ժամանուի մի տաք խաւարին մէջ դարան պատրաստելու եւ ճշմարտութեան զինուորներն գահավիմելու . Տեարք ժամանակը մեծ մեծ աղդեցութիւններ ունի իրողութեանց վրայ . . . յիշեցուցինք խողբագրով թէ «Պողոս աքսորելով մեծ քառակագիտութիւն մը գործած կըլլաք, » եւ այնպէս է :

\* \*

Սահմանագրութիւնը քուէի ցանկին դուրս կը հանէ, ուսմունքէ եկեղեցականութենէ, արդի քաղաքականութենէ զուրկը . կը մերժէ վատահանքաւեալը, որոյ համար կը թողունք առաջին անցքերը՝ որք Պատրիարքարանիդ արձանագրութեանց մէջ են՝ լինել, այլ պատրաստեմք ներկայացընել եւ հաստատել՝ սոյնի վոլսանորդութեան օրով անցուցած ամբարիչու վարքը. անուսումնափասթենէ յառաջ եկած յետաղինութիւնը, եւ անքաղաքավարութենէ աղդին քաղաքականութեան վտանգելու զեղջկութիւնը, որոց ամբաստանութեան բողոքագրելով՝ այս օրերս կառավարութեան դուռը լեցուեցաւ, ամբաստանութիւններ՝ որ «Թիարանով» միայն կրնայ քաւուիլ եւ ոչ թէ հարիւր հագար բնակչաց առաջնորդ կարգելով, եւ զանոնք նիւթեապէս եւ բարոյապէս ՚ի կորուստ մասնելով՝ Տեարք արդարութեան առաջին պայմանն իւրաքանչիւրոց ըստ գործոց հաստուցումն է, այս արդարութեան հաստուցման միշտ ակնդէտ կը մնան ամենայն ժողովուրդք Վասպուրական աշխարհին :

1872 յունիս 27 ՚ի Վան :

Յ. Գ. Տեարք, եթէ մեր աշխարհի յառաջդիմութիւնը կամ խաղաղութիւնը կը սիրէք, հետեւեալ երկու պայմաններն անհրաժեշտ են որ իբրեւ վերջաբան խոնարհաբար ձեզ կը ծանուցանեմք : Առաջին՝ Պողոսին մեր սահմանէն «տարապայման հեռացնել, » երկրորդ դՊողոս ո-

թիմօք սահմանադրութեան քուէին մերժող առարկութիւններն՝ զոր վեր մենք կը կնեցնեմք, այսինքն յանցանքներն, նոյնը պատրիարքարանէդ պաշտօնական կերպով աեղւոյս ժողովրդեան նամակագրէք թէ սոյն պատճառներով Պողոս քուէին զրկեալ է, եւ ահա նոյն ժաման ամէն բան վճարեալ է :

Ստորագրութիւնք

ԿՌ ԱՆՀԱՆԵ ՊՐԵՊՈՆՈՒԹԻՒՆ Վ. Պ. ՀԱՅՐԵՆԻ

3

Ամենաալատիւ Սրբազն Հայրիկ և պատկառելի Հարք Կրօնական ժողովոյ :

Յիրաւի ո՛չ ստկառ զամանք է Վասպուրականի ժողովրդեան ողջախոհ և ազատամիտ մասին, որ այն ինչ տարբիններէ հետէ առաջին բռնաւոր չարագործ Պողոս վարդապետին լուծին ներքեւ կ'ողբար վասպուրականը իւր քաղաքական և բարոյական վեճակը և միշտ ազատութիւն և գթութիւն կ'արագակէր, այսօր նոյն աշխարհածանօթի համար Կրօնական ժողով ամբաստանութիւններ կը պահանջէ զայն դատավարուելու համար, և լրագիրներէն ու մանք զայն շատագովելու և փատարանելու սկսած են, և որ աւելի ցաւալին է առ այս սկ և շահախնդիր զրիններն ալ հին սիրակալութեանց յագուրդ տալու մտօք Սրբազն Պատրիարքի զէմ անիմաստ բաւերով վայրաբանութիւններ ընել ալ յանդգնեցան, և այլն և այլն Արդ յիշեալ Պօղոսին անբարոյական կենցաղը և արքին վարքը լրագրաց կը թողումք հանդիսիւ զբուատելու . մենք ալ, կը փութամք առաջի առնել Զեր Սրբազնութեանց հաւաստի աղացոյցներով՝ որոց շատերու ականատես և տեղեակ իսկ պատրիարք կը թողումք Ա. Պողուն փախուստ, Սարգսք, վասնորոյ կը թողումք Ա. Պողուն փախուստ, Վարդապէս պատրիարքի զայն ի կարգէ լուծելու պաշտօնական յայտագիրները յիշել, կը թողումք նաեւ յիշել Պօղոսին Պոնտոսէն կրօնափոխութեան դիմելու յայտարարութիւ-

նր , մեք կը թողումք չատէն քիչ այն անցքերը որք նորա  
ի վան վերադարձն տեղի ունեցան . . . ( Այս տեղէն  
կ'սկսին թուով իբրև ամրաստանութիւն գրել որոցմէ  
շատեր ցանկին մէջ առնուած ըլլալով չը կրկնեցինք . ի  
պերջոյ կը յօւելուն ըսել . ) ի վերաց այսր ամենայնի թող  
խնայէ սրբագումար ժողովդ այսպիսի ձրիւք առաւելեալ  
գեղջական կենցաղսվարող խփիկսանան սնող վայրենի  
քիւրտերու առաջեւ դաստիարակուող այր ու բեն գիտ-  
նալու անկարոզ անուսում անձ մը 100000 բնակչօք լի  
Հայ Աշխարհի մը հովիւ կարգելը . և վերջապէս եթէ  
Կրօնական ժաղովոյդ տրամադրութիւններ կը ներին տա-  
կուին եկեղեցի ի՞նչ է անգիտացող եկեղեցական մը այս-  
պիսի վիճակի մը ընտրելեաց ցանկին մէջ տեղի գտնելու .  
թող նախ այս ամրաստանութիւններէն ինքզինք անբա-  
սիր առնէ , և միջոց մը ինք իր վայրենաբարոյ սպառնա-  
լիքներով հանդերձ մեր սահմաններէն տարապայման հե-  
ռանայ . . .

1872 յուլիս 26 կան :

Եղորդակիրութիւններ 35 անշնչ :

Փ.

ինչպէս կը տեսնուի վերոգրեալ պատճէննե-  
րով՝ վանաց ժողովուրդը յառաջներ ալ շարունա-  
կաբար բողոքած է եղեր Պօղոս վարդապետի վը-  
րան . իսկ վերջերը տեղի յաճախ : Տարակրյո չ'կաց  
որ բազմաթիւ գրուածքներ եկած ու պահուած  
են Պատրիարքարանը կամ Ս. Խրիմեանին ձեռքը :  
կը գիտենք նաև թէ այդ գիրերէն սմանց ոճը  
խիստ է , և տեղ տեղ անվայել բառեր գործած-  
ուած կը թափ ընթերցողին . բայց այդ իրենց  
սպասիկ ցաւէն յառաջ եկած է : Այս տեղ դըր-

ուած քանի մը նամակաց պատճէնները՝ միայն այն  
նամակներուն են , որք մեր ձեռքով եկած ու  
մատուցուած եղեր են : Պօղոս եղողներս ալ մեր  
կողմէն բողոքներ մատուցած ունինք , անսնց  
պատճէնը աւելորդ թուեցաւ տեղու մէջ բերել :  
ի հարկէ քահանայի նամակէն կը հասկցուի թէ  
Պօղոս վարդապետ ուղղող կամ ուղելու համար ըս-  
տորագրող անձին ըներէն ո՞րքան այդպէս ազդե-  
ցութեանց տակ են :

Ահա թէ այնքան սոսկապի յանցանաց ու վար-  
մանց համար՝ զորս քաջ գիտէր Խրիմեան սրբա-  
զան , իբրև վանեցի . թէ վանաց քաղաքական ժու-  
ղավոյ անդամոց , և թէ ժողովրդոց այնպիսի և  
այնքան բողոքները նկատողութեան առած Ս. Խրիմ-  
եան՝ իբրև պատրիարք՝ չեր կրնար անտարեր  
մալ , նախ Պօղոս վարդապետին ու անոր երկու  
բարեկամ և քաղաքի առաջնուն կարդի անձանց կը  
դուք որ Պօղոս վարդապետ ինքնին ետ քաշուի Ա-  
ռաւնորդական պաշտօնէն . ( երանի թէ այն գը-  
րերուն պատճէն ալ ձեռք բերուէր և իլոյս ըն-  
ծայուէր ) . անոր տեղ կը նշանակէ վարդակ , նա  
քաղաքէն դուրս չելներ . քաղաքը կը յուզի , գե-  
ղերը իրար կ'անցնեն . Պօղուեանք և ապօղու-  
եանք իրարու գէմ կ'ելնեն : Հուսկ ուրեմն կարմը-  
ւորայ վանքը կը քաշուի իբր թէ , որ քաղաքն  
ըսել է նորէն : Հուսկ իր անցուցած կեանքը չենք  
ուղեր գրի առնել . բայց չենք կրնար զանց առ-  
նել որ ամէն օր քաղաքն եր նա , այդեստան ,  
անոր անոր տունը , և ժողովք իւր սիրելեաց ժող-  
ված իր գլխուն : Հայհոյութեանց , դաւաճանու-

թեանց , և խայտառակութեանց տեսարաններով լի էին այն տուներ և տեղերը , ուր նա կը յաճախէր . հանրագրութիւններ կը շինուէին . կառավարութեան պաշտպանութեանը կը դիմէին . մինչև փաշայի ներկայութեան այդ Պօղոսեանք սոսկալի բառերով կը խօսէին հայոց ազգի մը Ս . Պատրիարքին վրոյ . և փաշան կը սաստէր զիրենք . բնականաբար Առօղոսեանք ալ զիրենք արդարացընելու պաշտպանողական միջոցներու կը դիմէին . Պատրիարքարարանը կը հանրագրէին , կը հեռագրէին , փաշայէն կը կանչուէին : Մենք՝ ձեռին չունինք այս ամէն իրաց միջոցին եղած հանրագրութիւններ կամ հեռագիրները : Բայց կը զարմանանք թէ ի՞նչպէս Պօղոյ կրօնական ժողովն և Քաղաքական ժողովը նկատողութեան առած չեն անոնք . արդեօք Խրիմեան Սրբազնան երբէք չը ցցուց այդ գրութիւնները և չը բացատրեց այն ամէն պատճառները այդ Վարչութեան , որոյ պարաքն էր տեղեկանալ , կամ « քանի որ Կրօնական ժողովը բողոք գրած էր այս մասին Ս . Պատրիարքին վրոյ . . . և Քաղաքական ժողովը կուղէր քննել դայն . . . » — « Քանի որ Ս . Խրիմեանը կը յայտարարէր խառն ժողովյն թէ Պօղոս վ . ի վրայ քաղաքական յանցանքներ կային . անոր պաշտօնի նկատմամբ , ծանր ամբաստանութիւններ եկած էին , նա վիճակին յառաջադիմութեան և գաստիարակութեան զարգացման թշնամի էր . ևն . Սահմանագրութեան գործադրութիւնը եղած չէր վանայ մէջ . (և այդ մարդը ոչ կուղէր և ոչ կրնար գործադրէլ ) : « Այս կէտերը կրօնական ժո-

զովոյն յանձնարարած էր՝ բայց ժողովը սցու խընդիրը իր վրայ չէր առած . . . և նորին Սրբազնութիւնը պարտասորած է եղեր խնդիրն ինքնին գործադրելու . . . » : « Եւ եթէ ուղէր խառն ժողովը՝ այս խնդիրը կը յուղէր . . . և խնդիրը աւարտած չըլլալով՝ պէտք էր խառն ժողովն իր վերջին ուրոշումն ընէր : Եւ թէ ինքն՝ Ս . Պատրիարքը՝ ուր որ այս խնդիրն հասուցեր էր , կրնար անկէ ետ դառնալ ևն . ևն . . . » Այս խօսքերը արձանագրութենէն քաղուածէ , զոր հրաժարեալ Քաղաքական ժողովն իրբեւ « բացատրութիւն ամբատանութեանց » հրատարակեց :

Քաղաքական կամ խառն ժողովը պէտք էր քննութեան սկսէ Պօղոս վ . ի խնդիրը . բայց ի՞նչ ըրաւ , Պօղոսեանց պատասխանեց թէ « . . . Պօղոս վ . ի խնդիրը բլուավին : Ս . Պատրիարք Հօր կը վերաբերի . ուսուի որ և տնօրէնութիւն նուրին Սրբազնութեան վերապահուած է ընել » : Տես ի՞նոյն բացատրութիւն : Այս բանէն յետոյ մի և նոյն Վարչութիւնը իրբեւ առաջին կէտ ամբատանութիւն Ս . Պատրիարքին վրայ կը դնէ Պօղոս վ . ի խնդիրը , թէ առանց քննութեան աքսորած է զանի :

Չենք յի շեր թէ Պօղոս վ . կարմիւորէն Անապատ գնաց , հան ի՞նչ ըրաւ . ելաւ քրդերու մէջ և քրդերու հետ ի՞նչ խայտառակութեամբ և անառակութեամբ կեանքը վարեց . Քաղաքական կառավարութիւնը զանազն նկատողութիւն ըրաւ անոր վրայ . վերջապէս Ս . Պատրիարքի թագրիբով Բ . Գրան հրամանաւ վանայ կառավարու-

թիւնը զանի իւչ քիլիսայի վանքը զբկեց : Նոյն  
Ս. Խրիմեանի թագը իրով իւչ քիլիսային կարին  
եկաւ , կարինէն ալ վան զրկելու թագը բրն ըրաւ ,  
և այն է « զար դործագլեց » ներկայ վարչու-  
թիւնը . ինչպէս ինքը կըսէ :

Մենք կը նկատենք որ , « Խրիմեան Ս. առանց  
քննութեան զՓօղոս վ. արտորեց , և յանցաւոր  
եղաւ » բայ ամբասամնիչ ժողովոյն , Խրիմեան Ս.  
Եր այսուորյանցանքով ինկաւահա : Բայց կը հար-  
ցնենք՝ Ասով Պօղոս վ. արդարացաւ , ոչ Անոր  
ինդիրը քննել պէտք էր , և մեր ինդքածն ալայն  
էր ներկայ Վարչութենէն , վարչութիւնը փոխա-  
նակ այդ օրինաւորութեան և արդարութեան ան-  
տալու , և հետեւելու , շտապեց զՓօղոս վ. վան  
Պրկել , և ահա այսօր , յունվար 10 , լսեցինք որ Բ.  
Դունէն գիրն ալ բերաւ ու յանձնեց Պօղոսեանց :

Մեղ կը մնայ ուրեմն , այս տետրակը Աղդ .  
Վարչութեան ներկայացնելէն զինի , եթէ նորէն  
անդրդիր պահէ իր ըրած որոշումն , մեզ կը մը-  
նայ վերջինը համարել խոհեմութեան . . . և գի-  
մել բարձրադոյն կառավարութեան ներկայացնե-  
լու մեր այս վեաց և ճահու ինդիրը . . . : Ալ աղատ  
պիտի մնայ մեր իսկզ մեր պատիւ ալ :

Բարոյական և պատամական գատառտանին կը  
մասնենք զանոնք , որ բան պատճառ եղան թո-  
ղուլ , լքանիլ , մերժել զմեղ , և սոխպել Աղդ .  
առենէն կտրել մեր յայսը , գարձնել մեր երե-  
սը . . . :


Ինդրելով Աղդ . Երեսվախաններեն և ողջամիտ  
բանասէրներէն , որ իրենց զդացմաւնքն ու կար-


ծիքը հրավարակաւ յայտնեն , իբրև կարեկից մեր  
անկրելի կարեաց ու կենաց , և իբրև ճանաչող  
ու կատարող իրենց խղճին ու պարտեաց . . . :

1874 Յունիար 15:

4. Ե Բ Զ







11



EB 2002

43PF



01183